

ԳՆԱՀԱՏՈՒՄ

**Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն
ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ.
միջոցառումների ծրագրի¹**

Երևան 2013

¹ Սույն գնահատումը պատրաստվել է հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգի հանձնաժողովի փորձագետների կողմից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Ընդհանուր տեղեկություններ.....	3
2.	Կոոուպցիայի միությունները Հայաստանի Հանրապետությունում	5
3.	Հակակոոուպցիոն արդյունավետ քաղաքականության «սյունները».....	11
	3.1 Հակակոոուպցիոն արդյունավետ իրավական ակտեր.....	11
	3.1.1 Հայաստանի Հանրապետության հակակոոուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի կատարման վիճակը.....	12
	3.1.2 Հայաստանի Հանրապետության հակակոոուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի 2012թ. միջոցառումների մոնիտորինգի հիմնական արդյունքները.....	14
	3.1.3 2009-2012թթ. ռեթացիվ տարեկան և քառամյա ամփոփիչ հաշվետվությունների միջև առկա հակասությունները.....	23
	3.1.4 Պեղական մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության հակակոոուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի արդյունքների լրիվ կամ մասնակի չկատարման պատճառները.....	25
	3.1.5 Հայաստանի Հանրապետության հակակոոուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրում առկա թերությունները.....	27
	3.2 Հակակոոուպցիոն արդյունավետ մարմին.....	36
	3.2.1 Կոոուպցիայի դեմ պայքարի մարմինները և դրանց ներկայացվող չափանիշերը.....	36
	3.2.2 Կոոուպցիայի դեմ պայքարի գործող մեխանիզմի համապատասխանությունը միջազգային չափանիշերին.....	39
	3.2.3 Կոոուպցիայի դեմ պայքարի մարմիններ ստեղծելու հիմնավորումները և մոդելի ընտրությունը.....	39
	3.3 Արդյունավետ քննություն և պատիժ.....	42
4.	Կոոուպցիայի դեմ պայքարում ՀՀ սպանձեմ միջազգային պարզավորությունների կտրարման վիճակը.....	49
5.	Առաջարկություններ.....	54
6.	Օգտագործված աղբյուրների ցանկ.....	57

1. Ընդհանուր տեղեկություններ

Վերջին տասնամյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ձեռնարկել է մի շարք կարևոր քայլեր: Հակակոռուպցիոն ռազմավարական փաստաթղթերի ընդունմամբ ամբողջացվել է կոռուպցիայի դեմ պայքարի պետական քաղաքականությունը, սահմանվել են կոռուպցիայի դեմ պայքարի պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, կատարելագործվել է օրենսդրական դաշտը, ներդրվել է հակակոռուպցիոն մարմինների ինստիտուցիոնալ համակարգ: Դեռևս 2003թ. նոյեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը, որին հաջորդել է 2009 թվականի հոկտեմբերի 8-ին Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 1272-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագիրը (այսուհետ՝ ՀՌԽՄԾ կամ Ծրագիր):

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական ուղեւիշները 2000 թվականից ի վեր շարունակաբար ամրագրվել են Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության, ինչպես նաև փարեկան գործունեության միջոցառումների ծրագրերում: Վերջին՝ 2013թ. մայիսի 16-ի թիվ 515-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրում ևս որպես հիմնական ուղղություն կարևորվում է «ազատ և արդար Հայաստան»-ի կառուցումը, որի ուղղությամբ կատարվող հիմնական գործողություններից է կոռուպցիայի դեմ պայքարը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը որպես խնդիր է ձևակերպվել կոռուպցիա ծնող պարճառների վերացումը, այդ գործընթացում թափանցիկության բարձրացումը՝ շեշտադրելով կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ մոտեցման գերակայությունը ընդդիմության պարասխանաբու մասնակցությամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրով որպես հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական նպատակ և ակնկալվող վերջնական արդյունք է սահմանել կոռուպցիայի ընդհանուր մակարդակի էական կրճատումը, իսկ ակնկալվող հիմնական արդյունքներն են՝ կոռուպցիայի համակարգային բնույթի վերացումը, կոռուպցիայի փարածվածության աստիճանի նշանակալի սահմանափակումը, քաղաքացիներին մարտցվող հանրային ծառայությունների որակի բարելավումը, սոցիալական արդարության ընկալման բարելավումը, քաղաքական համակարգի կայունության ամրապնդումը, երկրի փնտեսական մրցունակության բարձրացումը:

Նշված նպատակի և հիմնական արդյունքների կենսագործման համար փաստաթղթում նախատեսվել են շուրջ 124 ռազմավարական դրույթներ, որոնք բաժանվում են միջոցառումների՝ առանձնացված 2009, 2010, 2011 և 2012 թվականների իրականացման համար: Յուրաքանչյուր միջոցառման համար նախատեսվել է միջոցառման կատարման համար պարասխանաբու մարմինը, ակնկալվող արդյունքը, արդյունքի գնահատման մոնիտորինգային ցուցիչը և ֆինանսավորման աղբյուրը:

Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն պետական քաղաքականության ամբողջական իրականացման ապահովման համար 2004 թվականի հունիսի 1-ին ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծվել և մինչ օրս գործում է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ)²: Այն ի պաշտոնե գլխավորում է ՀՀ վարչապետը: Խորհրդի կազմում ներգրավված են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի փոխակալը,

² «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ ստեղծելու մասին» ՀՀ Նախագահի 2004 թ. հունիսի 1-ի ՆՀ-100-Ն հրամանագիր՝ փոփոխված «ՀՀ Նախագահի 2004 թ. հունիսի 1-ի ՆՀ-100-Ն հրամանագրում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ Նախագահի 2006 թ. հունիսի 21-ի ՆՀ-144-Ն հրամանագրով:

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխարակազմի ղեկավար-նախարարը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, Հայաստանի Հանրապետության նախագահի օգնականը, Հայաստանի Հանրապետության գլխավոր դարախազը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահը, Հայաստանի Հանրապետության փնտրեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահը, Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի վերահսկիչ պալատի նախագահը և Հայաստանի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարը:

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կանոնակարգի³ համաձայն՝ Խորհրդի հիմնական գործառույթներն են՝ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի միջոցառումների իրականացման աշխատանքների համակարգումը և դրանց նկատմամբ դիտարկումների իրականացումը, գերարեսպուբլիկան հակակոռուպցիոն ծրագրերի մշակման և իրականացման գործընթացի կազմակերպումն ու համակարգումը, միջազգային պարտավորություններից և հանձնառություններից բխող միջոցառումների իրականացման համար միջոցների ձեռնարկումը և այլն:

Խորհրդին առընթեր ստեղծվել է Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգի հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ ՀՀ նախագահի օգնականի նախագահությամբ: Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգի հանձնաժողովի կազմը ներառում է՝ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պարզամակրական խմբակցությունների և խմբերի մեկական անդամ (համաձայնությամբ), կոռուպցիայի դեմ պայքարող երկրների խմբում՝ Հայաստանի Հանրապետության պարլիթարական ղեկավար, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի քարտուղար, անցումային փնտրեսություններ ունեցող երկրների հակակոռուպցիոն նախաձեռնությունում աշխատանքային խմբի ղեկավար, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխարակազմի իրավաբանական վարչության պետ, փարաձաշրջանային զարգացման կենտրոն «Թրանսփարենսի ինթերնեշնլի» հայաստանյան մասնաճյուղի նախագահ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (համաձայնությամբ): Հանձնաժողովի նախագահը և անդամները հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով, իսկ հանձնաժողովի որոշումներն ունեն խորհրդարկական բնույթ:

Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգի հանձնաժողովի հիմնական գործառույթներն են՝ հակակոռուպցիոն ռազմավարության և գերարեսպուբլիկան հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման նկատմամբ դիտարկումների անցկացումը, հակակոռուպցիոն պայքարի մեխանիզմների կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների նախապարաստումը:

Հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման համար Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է կոռուպցիայի դեմ պայքարի ապակենտրոնացված համակարգ, որում քաղաքականության մշակման, հսկողության և համակարգման գործառույթները փարանջարկված են կոռուպցիայի բացահայտման և հետապնդման մասնագիտացված մարմինների կողմից իրականացվող գործառույթներից:

Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումը և նախաքննությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության հարուկ քննչական ծառայությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը: Կոռուպցիոն հանցագործությունների նախաքննության և հետաքննության նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև կոռուպցիոն

³ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կանոնակարգը հաստատվել է «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ ստեղծելու մասին» ՀՀ Նախագահի 2004 թ. հունիսի 1-ի ՆՀ-100-Ն հրամանագրով:

հանցագործություններով դադարանում մեղադրանքի պաշտպանությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը⁴:

2. Կոռուպցիայի միտումները Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի մոնիտորինգի և գնահատման համակարգը խարսխված է միջազգայնորեն ընդունված կոռուպցիայի գնահատման ցուցանիշների համակարգի և դրանց մեթոդաբանության վրա⁵: Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության վերջնական արդյունքը՝ «կոռուպցիայի ընդհանուր մակարդակի կրճատումը» չափվում է «Թրանսփարենսի Ինթերնեշնլի» կոռուպցիայի ընկալման համաթիվ և Համաշխարհային բանկի ինստիտուտի կոռուպցիայի հսկողության համաթիվ ցուցանիշների թիրախների համադրմամբ⁶: Ծրագրի վերջնական արդյունքը պայմանավորված է մի շարք միջանկյալ արդյունքներով (դրանք են՝ գործառնական, վարչական և քաղաքական կոռուպցիայի մակարդակների էական կրճատումը), որոնց մոնիտորինգն ու գնահատումը հիմնականում սահմանված են ըստ կառավարման արդյունավետության միակցված ցուցանիշերի՝ կարգավորման որակ, կառավարման արդյունավետություն, իրավունքի գերակայություն, ծայնի լսելիություն և հաշվեքվովողականություն, քաղաքական կայունություն, քաղաքացիական ազատություններ⁷: Նկարի ունենալով այս հանգամանքը՝ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի իրականացման արդյունքում կոռուպցիայի մակարդակի և փարսածվածության փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում գնահատելիս կօգտագործվեն 2009 թվականից ի վեր վերոնշյալ կազմակերպությունների կողմից իրականացված գնահատումների ու ուսումնասիրությունների արդյունքները:

Կոռուպցիայի ընկալման համաթիվ⁸

«Թրանսփարենսի Ինթերնեշնլի» կոռուպցիայի ընկալման համաթիվը պետություններին դասակարգում է՝ ըստ հանրային ոլորտում կոռուպցիայի ընկալման մակարդակի: Արդյունքների համար հիմք է ընդունվում 0-ից 10 միավորանոց սանդղակը, որտեղ 0 միավորով ներկայացվում են խիստ կոռումպացված երկրները, իսկ 10 միավորով՝ չափազանց «ազնիվ» երկրները:

Ստորև ներկայացված գծաչափեր 1-ը ցույց է փայլա, որ 2007-2011 թվականներին Հայաստանում կոռուպցիայի ընկալման համաթիվի փոփոխությունը բացասական է: 2007 թվականին արձանագրված 3 միավորի փոխարեն 2011 թվականին Հայաստանին փրկել է 2.6 միավոր:

⁴ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագիր՝ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 1272-Ն որոշմամբ, կետ 61:

⁵ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագիր՝ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 1272-Ն որոշմամբ, գլուխ 6:


⁶ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագիր՝ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 1272-Ն որոշմամբ, կետ 65:

⁷ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագիր՝ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 1272-Ն որոշմամբ, կետեր 67-74:

⁸ «Թրանսփարենսի Ինթերնեշնլի» կոռուպցիայի ընկալման համաթիվի վերաբերյալ հավելյալ փողկությունները զեկտեղված են «Թրանսփարենսի Ինթերնեշնլի» պաշտոնական կայքէջում՝ www.transparency.org հասցեում:

2012 թվականին կոռուպցիայի ընկալման համաթվի մեթոդաբանությունը և գնահատման սանդղակը փոփոխության է ենթարկվել: Ներկայումս կոռուպցիայի ընկալման համաթիվը գնահատվում է 100 միավորանոց սանդղակով, և 2012 թվականի համար Հայաստանի Հանրապետության ցուցանիշը եղել է 34 միավոր՝ հնարավոր 100-ից: Աստիճանակարգմամբ Հայաստանը զբաղեցնում է 105-րդ տեղը՝ 176 երկրների շարքում:

Գծապարկեր 1. Կոռուպցիայի ընկալման համաթիվը 2007-2011 թթ.



Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր⁹

«Թրանսփարենսի ինթերնեշնլի» կոռուպցիայի համաշխարհային բարոմետրը չափում է կոռուպցիայի դրսևորումների և դեպքերի վերաբերյալ հասարակական կարծիքը: Դրա միջոցով գնահատվում է՝ արդյո՞ք հասարակության ընկալմամբ փոխվել է կոռուպցիայի վիճակը երկրում, կառավարության հակակոռուպցիոն ջանքերն արդյո՞ք եղել են արդյունավետ և որո՞նք են առավել կոռումպացված ոլորտները:

2011 թվականի արդյունքների համաձայն՝ հարցվածների 54%-ը Հայաստանի Հանրապետության կառավարության հակակոռուպցիոն ջանքերը գնահատել է անարդյունավետ, 20%-ը՝ ոչ արդյունավետ, ոչ անարդյունավետ, և միայն 27%-ն է դրանք համարել արդյունավետ: Հետազոտության մասնակիցների մոտ 50%-ի կարծիքով 2007-2010թթ. ընթացքում կոռուպցիայի մակարդակը և փարսավածությունը երկրում աճել է, 35%-ը համարել է, որ այն մնացել է անփոփոխ, և միայն 15%-ն է նկատել կրճատում:

Հետաքրքրական է, որ հարցվածների ընդամենը 39%-ն է նշել, որ քաղաքացիներն ունեն դերակատարում կոռուպցիայի դեմ պայքարում, մինչդեռ մյուս երկրներում միջին ցուցանիշը 70%-ն է: Հայաստանի ցուցանիշին մոտ են Լատվիան՝ 28%, Ռուսաստան՝ 29%, և Ռուսաստանի Դաշնություն՝ 33%:

Ըստ 2011 թվականի հետազոտության արդյունքների՝ առավել կոռումպացված բնագավառներն ու մարմիններն են՝ կրթական համակարգը, ոստիկանությունը, դատական համակարգը և հանրային ծառայությունը:

2013 թվականի արդյունքների համաձայն՝ հարցվածների 19%-ը նշել է, որ կոռուպցիան Հայաստանի Հանրապետությունում նվազել է, մինչդեռ 43%-ը նկատել է աճ: Հարցվածների 19%-ը Հայաստանի Հանրապետության կառավարության հակակոռուպցիոն ջանքերը գնահատել է արդյունավետ, 53%-ը՝ անարդյունավետ կամ չար անարդյունավետ: Որպես

⁹ Թրանսփարենսի ինթերնեշնլի՝ կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի վերաբերյալ հավելյալ տեղեկությունները գեպեղված են Թրանսփարենսի ինթերնեշնլի պաշտոնական կայքէջում www.transparency.org հասցեում:

ամենակոռուսացված ոլորտներ/կառույցներ են ընկալվում դափական համակարգը՝ 69%, հանրային ծառայողները՝ 68%, առողջապահական հիմնարկները և կազմակերպությունները՝ 68%, ոստիկանությունը՝ 66% և կրթական համակարգը՝ 58%:

Հույժ սփահողիչ է կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիների դերի ընկալման վերաբերյալ պատկերը: Հարցվածների միայն 37%-ն է կարծում, որ քաղաքացու ներգրավումը կոռուպցիայի դեմ պայքարում կարող է հանգեցնել դրական փոփոխության: Չնայած այն բանի, որ Հայաստանի ցուցանիշը շար փոքր է եղել նաև 2011 թվականին՝ 39%, (միջին ցուցանիշը 70%-ն է), այն 2%-ով դարձյալ նվազել է: Ավելի ցածր ցուցանիշ է գրանցվել միայն Ուկրաինայում (29%), Սերբիայում (34%) և Թունիսում (35%): Կոռուպցիայի դեմ պայքարում ներգրավվել ցանկացել է հարցվողների միայն 43%-ը, որը ուսումնասիրության մեջ ընդգրկված 107 երկրների մեջ ամենացածր ցուցանիշն է:

Հարցվածների միայն 33%-ն է պարրաստականություն հայտնել բարձրաձայնել կոռուպցիոն դեպքերի մասին: Բացասական այս ցուցանիշով Հայաստանը զիջում է Ուկրաինային (26%), Եմենին (27%), Լիբիային (29%) և Հունգարիային (30%):

Արդար կառավարման ցուցանիշներ¹⁰


Համաշխարհային բանկի ինստիտուտի¹¹ կողմից կիրառվում են համաշխարհային կառավարման վեց ցուցանիշներ՝ 1. ձայնի լսելիություն և հաշվեպնդականություն, 2. քաղաքական կայունություն և բռնության բացակայություն, 3. կառավարման արդյունավետություն, 4. կարգավորման որակ, 5. օրենքի գերակայություն, և 6. կոռուպցիայի հսկողություն: Ցուցանիշները հիմնվում են 0-100 աստիճանակարգման վրա, որտեղ 0-ն ամենացածր աստիճանն է, իսկ 100-ը՝ ամենաբարձրը:

Ստորև ներկայացված գծապատկերը ցույց է տալիս, որ 2009-2012թթ. ընկած ժամանակահատվածի համար Հայաստանում արդար կառավարման ցուցանիշներից երկուսը՝ ձայնի լսելիությունը և օրենքի գերակայությունը, ենթարկվել են դրական փոփոխությունների՝ հասնելով համապատասխանաբար 27.7 և 29.9 միավորի: Հակառակ դրան՝ մյուս ցուցանիշները, այդ թվում կոռուպցիայի հսկողության ցուցանիշը, վատթարացել են:

Գծապատկեր 2. Արդար կառավարման ցուցանիշները 2009-2011թթ.

¹⁰ Համաշխարհային բանկի ինստիտուտի՝ համաշխարհային կառավարման ցուցանիշների վերաբերյալ հավելյալ տեղեկությունները գտնելված են կազմակերպության պաշտոնական կայքէջում՝ <http://info.worldbank.org/governance/wgi/index.asp> հասցեում:

¹¹ Եվրոպական վերակառուցման ու զարգացման բանկի և Համաշխարհային բանկի «Բիզնես միջավայրի և ձեռնարկությունների կապարողականի մասին» համարել ուսումնասիրությունը ևս պարունակում է 2005 և 2008 թթ.-ին ՀՀ-ում կոռուպցիայի վերաբերյալ մի շարք հեղափոխական փոփոխություններ, որոնք կարող են գտնվել http://siteresources.worldbank.org/INTECAREGTOPANTCOR/Resources/704589-1267561320871/Armenia_2010.pdf հասցեում:



Համընդհանուր բարեխղճության զեկույց¹²

Համընդհանուր բարեխղճության զեկույցը հնարավորություն է տալիս գնահատելու կառավարման որակը և ազգային հակակոռուպցիոն մեխանիզմների կիրարկելիությունը: Ընդգրկված մեթոդաբանությունը համադրում է թվով 300 քանակական և որակական ցուցիչներ: Այն ուսումնասիրում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ պետական գնումների թափանցիկ համակարգը, մամուլի ազատությունը, եկամուտների հայտարարագրումը, շահերի բախումների բացառումը: Գնահատումը կարևորում է ոչ միայն օրենսդրական դաշտը, այլև իրավակիրառ պրակտիկան և փաստացի դրությունը:

Ցուցանիշները հիմնվում են 0-100 միավորանոց աստիճանակարգման վրա, որտեղ 0-ն ամենացածր աստիճանն է, իսկ 100-ը՝ ամենաբարձրը: Համընդհանուր բարեխղճության զեկույցի 2011 թվականի փվյալների համաձայն՝ ՀՀ-ի ընդհանուր միավորը 63-ն է: Համակարգը գնահատվում է թույլ: Հայաստանն իր այս ցուցանիշով մտնում է Ադրբեջանին և գլխում է Ուկրաինային, Չինաստանին, Գանային, Մեքսիկային, Քենիային, Մերիիային, Վրաստանին, Կոստոյին և այլն: Թեև սույն զեկույցում իրավական կարգավորման ռեժիմը սրացել է 83 միավոր հնարավոր 100 միավորից, օրենքների կիրառման արդյունավետությունը գնահատվել է ընդամենը 46 միավոր: Հակակոռուպցիոն մեխանիզմի արդյունավետությունը գնահատվել է 34 միավոր, ինչը համապարասխանում է «շար թույլ» երկրների աստիճանակարգմանը:

Համընդհանուր բարեխղճության համաթիվ¹³

Համընդհանուր բարեխղճության համաթիվը գնահատում է հակակոռուպցիոն մեխանիզմների գոյությունը, դրանց արդյունավետությունը և մարտնչությունը՝ կառավարության հաշվետվողականության, թափանցիկության և քաղաքացիական վերահսկողության համադրությամբ ներառելով վեց հիմնական կարեգործիքներ՝ 1. քաղաքացիական հասարակություն, հանրային տեղեկատվություն և մեդիա, 2. ընտրություններ, 3. հաշվետվողականություն, 4. կառավարում և քաղաքացիական ծառայություն, 5. վերահսկողություն և կարգավորում, 6. հակակոռուպցիոն քաղաքականություն և իրավունքի գերակայություն: Արդյունքների համար հիմք է ընդունվում 0-ից 100 միավորանոց սանդղակը, որտեղ 0 միավորով ներկայացվում են խիստ վարթար վիճակում գտնվող երկրները, իսկ 100

¹² Համընդհանուր բարեխղճության զեկույցի վերաբերյալ հավելյալ տեղեկությունները գեներվված են <http://www.globalintegrity.org/report> հասցեում:

¹³ Համընդհանուր բարեխղճության զեկույցի վերաբերյալ հավելյալ տեղեկությունները գեներվված են <http://report.globalintegrity.org/globalIndex.cfm> հասցեում:

բալով՝ կաբարյալ երկրները: Պեպոթյունները դասակարգվում են ըստ հինգ խմբերի՝ 0-60՝ շաբ թույլ, 60-70՝ թույլ, 70-80՝ միջին, 80-90՝ ուժեղ, 90-100՝ շաբ ուժեղ: 2007 թվականին արձանագրած 57.53 ցուցանիշի փոխարեն 2011 թվականին Հայաստանն արձանագրել է 62.69 միավոր ցուցանիշը և այն առայժմ դասվում է թույլ երկրների շարքին:

Կոռուպցիայի վերաբերյալ փնային փնտեսությունների հեղազոտություն¹⁴

«Հեղազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստանի» կողմից Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության «Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման» ծրագրի շրջանակներում անցկացվել է Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ 2010 թվականի հեղազոտությունը, որի նպատակը կոռուպցիայի հանրային ընկալման չափումն ու հակակոռուպցիոն ջանքերի գնահատումն էր: Այս հեղազոտությունը ևս հեղաքրքրիչ օրինագիտություններ է բացահայտում. մասնավորապես, հեղազոտության մասնակիցների մոտ 21%-ն ընդունել է, որ պարտապար է կաշառք վերցնել, իսկ 58%-ը հայտնել է կաշառք փախու պարտապարականության մասին: 2008-2010 թվականներին 14%-ով աճել է այն մարդկանց թիվը, ովքեր կոռուպցիան դիտարկում են որպես կյանքի իրողություն:

2010 թվականին անցկացված այդ հեղազոտության մասնակիցները Հայաստանում ամենակոռումպացված կառույցներ են համարել դատախազությունը, դատարանները, կենտրոնական ընտրական հանձնաժողովը, իրավապահ մարմինները: Կոռուպցիոն երևույթների փարածվածության առումով մարտնչել են հեղազոտող ոլորտները՝ առողջապահություն, ընտրական համակարգ, կրթություն, ճանապարհային ոստիկանություն, հարկային ծառայություն, ոստիկանություն, մաքսային ծառայություն, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն և կադաստր: Հարցվածների 52%-ը փեսակետ է արտահայտել, որ Կառավարությունը չունի կոռուպցիայի դեմ պայքարելու քաղաքական կամք և իրական ցանկություն: Ընդ որում, 2009 թվականի դրությամբ նման փեսակետ է արտահայտել հարցվողների 44%-ը:


Հայաստանում 2012 թվականին կոռուպցիայի մակարդակի վերաբերյալ փվայներ են պարունակվում «Այ Փի Էս Մի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդարկության ինտրիփուրի «ՀՀ իշխանությունների գործունեության գնահատականները. փեսանելիությունը, ձեռքբերումներն ու բացթողումները» համահայկական ներկայացուցչական սոցիոլոգիական հեղազոտության մեջ:

Համաձայն փվայ հեղազոտության՝ 2012 թվականի նոյեմբերի դրությամբ 2011 թվականի դեկտեմբերի հեղազոտությունների համեմատ, դիտարկված ոլորտների վերաբերյալ հասարակական ընկալումներում նվազել է այն անձանց քանակը, ովքեր համարում են, որ կոռուպցիան աճել է:

Այսպես, «կաշառակերություն չկա» պարասխաններն՝ ըստ ոլորտների, ներկայացված են ստորև ներկայացված գծապարկերում:

Գծապարկեր 3. Կոռուպցիայի մակարդակի ընկալումները փարքեր ոլորտներում

¹⁴ Կոռուպցիայի վերաբերյալ փնային փնտեսությունների հեղազոտության վերաբերյալ հավելյալ փնտեսությունները գեղեղված են <http://old.crrc.am/index.php/en/159/> հասցեում:



Գծապարկերից երևում է, որ հասարակության մեջ կոռուպցիայի մակարդակի ամենացածր ընկալումը տրեղական ինքնակառավարման մարմիններում է և դպրոցներում: Կոռուպցիայի ամենաբարձր մակարդակն ընկալվում է ոստիկանությունում, դատախիւական համակարգում, հարկային և մաքսային մարմիններում, պետավորտեսչությունում և բուհերում:

Ընդ որում, 2011թ. դեկտեմբերի համեմատ՝ 2012թ. նոյեմբերին կոռուպցիայի մակարդակի նվազում է գրանցվել դպրոցներում, պետավորտեսչությունում, կադասարում, բուհերում, հարկային ու մաքսային մարմիններում: Կոռուպցիայի մակարդակի աճ է գրանցվել զինկոմիսարիատներում, դատախիւական համակարգում, ոստիկանությունում, բուժնիւնարկներում:

Այսպիսով, վերոնշյալ ցուցիչների դինամիկան վկայում է, որ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրում նախանշված նպատակները չեն իրագործվել, և Հայաստանը շարունակվում է դասվել կոռուպցիայի բարձր մակարդակ ունեցող երկրների շարքին:

3. Հակակոռուպցիոն արդյունավետ քաղաքականության «սյուները»

Հակակոռուպցիոն արդյունավետ քաղաքականությունը պետք է հիմնված լինի հետևյալ հիմնական «սյուների» վրա՝

- հակակոռուպցիոն արդյունավետ իրավական ակտեր
- հակակոռուպցիոն արդյունավետ մարմին
- արդյունավետ քննության և պարզեցիկության ապահովում

3.1 Հակակոռուպցիոն արդյունավետ իրավական ակտեր

Հակակոռուպցիոն արդյունավետ իրավական ակտերի գոյությունը դիտարկվում է երկու ասպեկտով՝ պարզաձև կարգավորիչ դաշտի առկայություն և արդյունավետ իրավակիրառ պրակտիկա:

Հայաստանի Հանրապետությունում 2009-2012թթ. կոռուպցիայի դեմ պայքարը ընթացել է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թթ. միջոցառումների ծրագրի, ինչպես նաև Կառավարության փարեկան գործունեության միջոցառումների ծրագրերի հիման վրա: Չնայած այն հանգամանքին, որ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագիրը որդեգրել էր գերարեստիտուցիոն (ոլորտային) հակակոռուպցիոն ծրագրերի մշակման և իրականացման քաղաքականություն՝ հակակոռուպցիոն կոնկրետ ծրագրերի մշակումը պետական մարմինների կողմից ապահովված չէ: Միայն առանձին դեպքերում են ընդունվել կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի ոլորտային ծրագրեր կամ այլ փաստաթղթեր (օրինակ՝ «Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների միջոցառումների համալիր ծրագիրը», «Առողջապահության համակարգի բարեխոսման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված աշխատանքների իրականացման ժամանակացույց 2010-2012թթ. համար»):

Կոռուպցիայի դեմ պայքարում կարևոր նշանակություն ունեն նաև Ծրագրի գործողության ընթացքում ընդունված հակակոռուպցիոն իրավական ակտերը, ինչպիսիք են՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքը ընդունված 22.12.2010թ.-ին¹⁵, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 26.05.2011թ.-ին¹⁶, ՀՀ ընտրական օրենսգրքը 26.05.2011թ.-ին (ընտրարշավների ֆինանսավորման մեջ կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմների մասով): Առավել վաղ ժամանակահատվածում ընդունված իրավական ակտերից հիշարկման արժանի է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 26.05.2008թ.-ին և ՀՀ դատական օրենսգրքը՝ ընդունված 21.02.2007թ.-ին¹⁷: Միաժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ Ծրագրով նախատեսված մի շարք հակակոռուպցիոն

¹⁵ «Գնումների մասին» ՀՀ օրենքով գնումների համակարգը լիովին ապակենտրոնացվել է, ներդրվել են գնումների գործընթացի մասնակիցների, այդ թվում՝ գնումների մասնագետների համար վարքագծի և շահերի բախման կարգավորման ընթացակարգերը:

¹⁶ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանվել են հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնավար անձի էթիկայի կանոնները, նախատեսվել է գույքի և եկամուտների հայտարարագրում, ստեղծվել է բարձրաստիճան պաշտոնավար անձանց էթիկայի հանձնաժողովը, սահմանվել է հանրային ծառայողի էթիկայի հանձնաժողովների կազմավորման կարգը:

¹⁷ ՀՀ Դատական օրենսգրքով սահմանվել են դատավորի վարքագծի կանոններ:

օրենքների ընդունումը չի ապահովվել: Օրինակ՝ «Ծրագրային բյուջեբաղադրման մասին»,¹⁸ «ՀՀ հանրային առողջության անվտանգության ապահովման մասին»¹⁹ ՀՀ օրենքներ չեն ընդունվել:

2005-2007թթ. ընթացքում ուժի մեջ են մտել և ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս դարձել հակակոռուպիցիոն ուղղվածության մի քանի միջազգային-իրավական փաստաթղթեր, մասնավորապես, Եվրոպայի խորհրդի՝ Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիան, Եվրոպայի խորհրդի՝ Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան և դրա լրացուցիչ արձանագրությունը, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիան²⁰:

3.1.1 Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի կարարման վիճակը

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի հունիսի 1-ի ՆՀ-100-Ն հրամանագրի 2-րդ կետով հաստատված հավելվածի 13-րդ կետի համաձայն՝ հակակոռուպցիոն ռազմավարության և գերապեսչական հակակոռուպցիոն ծրագրերի նկատմամբ դիտարկումների (մոնիթորինգի) իրականացման գործառնությամբ վերապահված է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգի հանձնաժողովին: Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ. հոկտեմբերի 8-ի N 1272-Ն որոշման 5-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ մեկամսյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգի հանձնաժողովին է ներկայացվում տարեկան հաշվետվություն՝ ծրագրում ներառված միջոցառումների, ինչպես նաև՝ նպատակային ցուցիչների իրագործման ընթացքի մասին:

Ի կատարումն նշված իրավական ակտերի պահանջների, նշված միջոցառումների իրականացման պարասխանաբու պետական մարմինները ներկայացրել են ամփոփիչ հաշվետվություններ ծրագրի ողջ ժամանակահատվածի համար: Դրանցում տվյալներ են ներկայացված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների արդյունքների և դրանց ցուցիչների, ինչպես նաև՝ արդյունքների ամբողջական կամ մասնակի կատարմանը խոչընդոտած պարճառների վերաբերյալ:

Հաշվետվություններ են ստացվել 21 պետական մարմիններից, իսկ երկու մարմին՝ ՀՀ Կառավարության աշխարակազմը և ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, հաշվետվություն չեն ներկայացրել:

Բնապահպանության նախարարությունն ակնկալվող ձևաչափով հաշվետվություն չի ներկայացրել՝ պարճառաբանելով, որ «... այն միջոցառումները, որոնց կատարմանը ներառված է նաև ՀՀ բնապահպանության նախարարությունը, չափելի չեն»: Արտաքին գործերի նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հաշվետվությունները նույնպես պահանջված

¹⁸ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի 5-րդ ռազմավարական դրույթի 2009թ. ակնկալվող արդյունքում նշված է. «Ծրագրային բյուջեբաղադրման պահանջներն ամրագրող օրենքի նախագիծը ներկայացված է ՀՀ կառավարություն»:

¹⁹ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի 34-րդ ռազմավարական դրույթի 2010թ. ակնկալվող արդյունքում նշված է. «ՀՀ հանրային առողջության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը վերանայված ու փոփոխված է, «ՀՀ հանրային առողջության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը ընդունվել է»:

²⁰ ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային իրավական փաստաթղթերը և ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման վիճակը ներկայացված է 4-րդ բաժնում:

մեծ մասով իր արդյունավետ օգտագործումը են պարունակում, որի պարճառով ներկայացված չեն նախարարության համապատասխանում:

Հերևանքի, քանակական վերլուծության են ենթարկվել 18 պետական մարմիններից սրացված փվայները:

Հաշվերու 2009-2012թթ. ժամանակահարվածում կարարման ենթակա արդյունքների թվով առաջարարը Հայասրանի Հանրապետության արդարարարության նախարարությունն է (224 արդյունք), որին հաջորդում է Հայասրանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուրների կոմիտեն (103 արդյունք), իսկ այնուհետև Հայասրանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (96 արդյունք): Ամենաթիչ թվով ընդամենը 2 արդյունք է գրնվել Հայասրանի Հանրապետության աշխարանքի և սոցիալական հարցերի նախարարության պարասխանարվության ներքո:

Հայասրանի Հանրապետության կառավարությանն առընթեր 3 պետական մարմիններն ընդամենը 1 արդյունք են ներկայացրել:

Աղյուսակ 1. «ամբողջությանը կարարված», «մասնակիորեն կարարված», «չկարարված» արդյունքների համամասնությունն ըսր գերարեսուրսությունների

Պետական մարմնի անվանումը	Տվյալ մարմնի կողմից կարարման ենթակա արդյունքների թիվը	Տվյալ մարմնի կողմից ամբողջությանը կարարված արդյունքների համամասնությունը	Տվյալ մարմնի կողմից մասնակիորեն կարարված արդյունքների համամասնությունը	Տվյալ մարմնի կողմից չկարարված արդյունքների համամասնությունը
ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	34	100%	0%	0%
ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողով	4	100%	0%	0%
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուրների կոմիտե	103	96%	2%	2%
ՀՀ ոստիկանություն	22	95%	5%	0%
ՀՀ արդարարարության նախարարություն	224	92%	5%	3%
ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով	17	82%	6%	12%
ՀՀ ֆինանսների նախարարություն	69	76%	10%	14%
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	38	75%	25%	0%
ՀՀ վերահսկիչ	4	75%	0%	25%

պալատ				
<< գլխավոր դատախազություն	35	69%	14%	17%
<< դատական դեպարտամենտ	9	67%	0%	33%
<< քաղաքացիական ծառայության խորհուրդ	27	66%	30%	4%
<< կենտրոնական բանկ	8	63%	37%	0%
<< առողջապահության նախարարություն	96	62%	24%	14%
<< կրթության և գիտության նախարարություն	56	58%	21%	21%
<< քաղաքաշինության նախարարություն	4	0%	50%	50%
<< ազգային վիճակագրական ծառայություն	3	0%	67%	33%
<< աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2	0%	0%	100%

Բոլոր գերատեսչություններից կողմից ամբողջությամբ կատարված արդյունքների միջին ցուցանիշը կազմում է 65.3%:

~~Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2012 թ. առաջին կիսամյակի արդյունքների միջին ցուցանիշը կազմում է 65.3%:~~
~~Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2012 թ. առաջին կիսամյակի արդյունքների միջին ցուցանիշը կազմում է 65.3%:~~
~~Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2012 թ. առաջին կիսամյակի արդյունքների միջին ցուցանիշը կազմում է 65.3%:~~

Բոլոր գերատեսչություններից կողմից մասնակիորեն կատարված արդյունքների միջին ցուցանիշը կազմում է 16.4%:

Բոլոր գերատեսչություններից կողմից չկատարված արդյունքների միջին ցուցանիշը կազմում է 18.3%:

3.1.2 Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի 2012թ. միջոցառումների մոնիտորինգի հիմնական արդյունքները

Միջոցառումների իրականացման պարասխանաբազու պետական մարմիններն իրենց փարեկան հաշվետվություններում փեղեկություններ են ներկայացրել ամբողջությամբ կատարված միջոցառումների մոնիտորինգի հիմնական արդյունքների վերաբերյալ: Մտորև ներկայացվում են պետական մարմինների գնահատմամբ ամբողջությամբ կատարված միջոցառումների մոնիտորինգի հիմնական արդյունքները:

Առաջին, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ՀՀ օրենսդրությունը միջազգային չափանիշերին համապատասխանեցման նպատակով ապահովվել է քաղաքական ազդեցություն ունեցող անձանց միջազգային ռեեստրների հասանելիությունը Հայաստանի Հանրապետության ֆինանսական դիրարկումների և ֆինանսական հաստատությունների համար: Բարձրացել է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեպքերի բացահայտման արդյունավետությունը: 2012թ.-ի ընթացքում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունների հարկանիշներով հարուցվել է 7 քրեական գործ: Նախաքննություն է կատարվել 5 քրեական գործով: Ավարտվել է 3 գործի նախաքննությունը: 2012թ.-ի ընթացքում դատարանի կողմից մեղադրական դատալծիք է կայացվել 2 գործով:

Երկրորդ, հարկային ոլորտում հարկային ծառայողների և հարկ վճարողների միջև անմիջական շփումները նվազեցնելու ուղղությամբ միջազգային լավագույն փորձի հիման վրա ներդրվել է հարկային հանցագործությունների քննության ընթացքում կոռուպցիայի հանցակազմը վեր հանելու և Կոմիտեի հանցագործությունների և կոռուպցիոն իրավախախտումների կապերը բացահայտելու մեթոդներ և ընթացակարգեր:

Ընդհանրապես էլեկտրոնային հարկային ծառայությունների շրջանակը: Ենթաօրենսդրական ակտով ամրագրվել է հարկային հաշվեպնդությունները բացառապես փոստով կամ էլեկտրոնային եղանակով ընդունելու պահանջը: Ներդրված է հարկ վճարողներին հիշեցում-ծանուցումների առաքման ավտոմատացված համակարգը: Հարկային մարմիններին ներկայացվող հաշվեպնդությունների 34%-ն իրականացվում է ոչ առձեռն եղանակով:

Գործարկված է ռիսկերի կառավարման և սրուզման ենթակա հարկ վճարողների ընտրողականության ավտոմատացված համակարգը:

Բարելավվել է հարկային մարմնի գործունեության հրապարակայնությունը, հաշվեպնդողականությունն ու օրինականությունը: Հարկային վարչարարության ներքին ընթացակարգերի միաբնակ կիրառման վերաբերյալ հաստատվել է 2012թ. հարկային ծառայողների ուսուցման ծրագիրը: 2012թ.-ին փայտագրվել և կայքում տեղադրվել են եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվարկները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հաշվեպնդությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի գործունեության, տեղեկատվական համակարգերում անհատական հաշիվների գրանցման կարգի վերաբերյալ մի շարք ուղեցույցներ: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվել է իրազեկման հանդիպումների շարք՝ նվիրված 2012թ. փարեսկզբից ուժի մեջ մտած հարկային օրենսդրական փոփոխություններին:

Ներդրված են ու ամբողջությամբ գործում են հարկային ծառայության գործունեության և պաշտոնատար անձանց գործողությունների բողոքարկման ընթացակարգերը, հարկ վճարողների սպասարկման կենտրոններն ու հեռախոսագանգերի սպասարկման կենտրոնը, որը 2012թ.-ին սպասարկել է 68947 դիմում (որից՝ 68251-ը՝ հեռախոսային, իսկ 696-ը՝ էլեկտրոնային): Բոլոր դիմումները և բողոքները սահմանված կարգով ընթացք են ստացել: Հաստատվել են հարկային ծառայողների պաշտոնեական առաջխաղացման ընթացակարգերը: Ներդրված են հարկային և մաքսային ծառայողների փարեկան աշխատանքային ծրագրի կատարողականի և կառավարչական հմտությունների, մասնագիտական պարաստիպիտության և որակավորման մակարդակի գնահատման համակարգերը: 2012թ.-ին իրականացվել է 81 պաշտոնեական առաջխաղացում, 171 հարկային ծառայողներ ենթարկվել են ռոտացիայի:

Կատարելագործվել է հարկային ծառայողների վերապարաստման համակարգը: Հաստատված են հարկային ծառայողների պարտադիր վերապարաստման ուսումնական ծրագրերը: 2012թ.-ին իրականացվել է 3415 հարկային ծառայողների վերապարաստում:

Ուժեղացվել է հարկային ծառայողների գործունեության օրինականության նկատմամբ ներքին հսկողությունը: Վերանայվել են հարկային ծառայության գործունեության օրինականության հսկողության ընթացակարգերը: 2012թ. ընթացքում իրականացվել է 20 ծառայողական քննություն, ինչի արդյունքում 6 հարկային ծառայողներ ազատվել են պաշտոնից, իսկ 41 ծառայողներ ենթարկվել են կարգապահական պարասխանավության: Էթիկայի կանոնների խախտումների թիվը կազմել է 11:

Երրորդ, մաքսային ոլորտում բարձրացել է մաքսային ծառայության կառավարման արդյունավետությունն ու հաշվետվողականությունը: Ներդրվել են մաքսային ծառայության կարարողականի գնահատման համակարգ, դրա վրա հիմնված մաքսային ծառայողի պաշտոնական առաջխաղացման ընթացակարգեր և մաքսային ծառայողի պարտադիր պարբերական ռոտացիայի կարգ: Մաքսային գործունեության 2011թ. հաշվետվությունը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կայքէջում:

Ռիսկերի կառավարման վրա հիմնված մաքսային հսկողության համակարգի ներդրման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով փեղափոխվող ապրանքների հսկողությունն ընթացողականությամբ իրականացնելու համար մաքսային ձևակերպման ավտոմատ համակարգում վերանայված և ներդրված են ռիսկի նոր չափանիշեր: Բոլոր մաքսավերում ամբողջությամբ ներդրված է ինքնահայտարարագրման և մաքսային միջնորդական գործունեության համակարգը: Մաքսային գնման և հեղափոխումային հսկողության ենթակա սուբյեկտների ընտրություններն իրականացվում են ռիսկերի կառավարման համակարգի միջոցով: Ընդլայնվել է մաքսային էլեկտրոնային հայտարարագրեր ներկայացնողների շրջանակը:

Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ավտոտրանսպորտային միջոցներով մեկնող և ժամանող քաղաքացիների մաքսային հսկողության երթուղային (կարմիր և կանաչ ուղիներ) համակարգը գործում է 6 մաքսակետերից 5-ում: Կանաչ ուղով ընկնող հայտարարագրերի թվաքանակը հայտարարագրերի ընդհանուր թվաքանակում կազմում է 70,2 տոկոս: Մաքսային ձևակերպումների ավտոմատացված TWM համակարգում ներդրվել է բացթողնման պահի էլեկտրոնային ֆիքսման ենթահամակարգը: Ոչ սակագնային կարգավորում չպահանջող ապրանքների ներմուծման մաքսային ձևակերպումների ողջ ժամանակահատվածը տարանվում է 2.5-6.5 ժամ միջակայքում: Մաքսային հսկողության նպատակով պահանջվող փաստաթղթերի թվաքանակը 6-ից նվազել է 3-ի:

Տնօրենավարող սուբյեկտների միջև մաքսային բեռի արդարացի բաշխման և մաքսային ծառայության թափանցիկության ու օրինականության ապահովման ուղղությամբ ապրանքների մաքսային արժեքի գնահատման ընթացակարգերը համապարասխանեցվել է Առևտրի համաշխարհային կազմակերպության պահանջներին և փեղափոխվել են մաքսային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքում: Գործարքի գնի մեթոդով որոշված գործարքները կազմում են գործարքների ընդհանուր թվաքանակի 71.5 տոկոսը:

Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է մաքսային ծառայության պաշտոնական կայքի և թեժ հեռախոսագծի միջոցով մաքսային մարմնի ղեկավարի, քաղաքացիների և տնօրենավարողների միջև արդյունավետ հաղորդակցություն: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի համակարգում գործում է գանգադարկման հանձնաժողով և թեժ գիծ, իսկ մաքսային ծառայության պաշտոնական կայքում հեղափոխված կապ:

Մաքսային իրավախախտումների համար կիրառված պարասխանավության միջոցների թիվը 2012թ.-ին կազմել է 1561: Դրանց վերաբերյալ փեղեկավորությունը, ինչպես նաև մաքսային ընթացակարգերի և փեղեկավորական փեխնույրիաներից օգտվելու վերաբերյալ ուղեցույցները փեղափոխված են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կայքէջում:

Չորրորդ, կրթության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի շարունակական գնահատման ու դրանց կանխարգելման ռազմավարական դրույթի շրջանակում մշակվել են «Հանրակրթական

ուսումնական հաստատության ուսուցչի վարպետության մակարդակի մասին» Կրթական քառասունամյա փոփոխության օրհանգիստի ծրագրերը, «Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության հերթական արեստատիվորման ենթակա ուսուցչի վերապատրաստման կարգը»: Լրամշակվել է «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ սպուզման կամ արեստատիվորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական փարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ ասփիճան փոխադրման» և «Դրեստատիվության ձևով (էքստրեն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու», «Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման երաշխավորությունների», «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություն գնահատման երաշխավորությունների», «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություն սովորողի ընդունելության, փեղափոխման և ազատման» կարգերը: Ներդրվել է բարձրագույն սովորողի ընդունելության, փեղափոխման և ազատման քննությունների միասնական համակարգը, ուսումնական հաստատությունների ընդունելության քննությունների միասնական համակարգը, որը ևս նպաստում է կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը ավագ դպրոցում, և հեշտացվել է դպրոցից՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների անցման գործընթացը: Արդյունքում՝ հավասար պայմաններ են ստեղծվել բոլոր դիմորդների և ուսանողների համար: 2012թ.-ին հավասարաբար անցած ոչ պեղական բարձրագույն ուսումնական հաստատությունների դիմորդները ընդունելության քննությունները հանձնել են կենտրոնացված եղանակով պեղական բուհերի դիմորդների հեղ միասին:

Կառավարման թափանցիկության, հաշվեպիտղականության ու օրինականության բարձրացման ռազմավարական դրույթի շրջանակում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված «Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների համալիր գործողությունների ծրագրի» համաձայն՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից մշակվել են իրենց փարեկան հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրերը: Խստացվել են բուհերի լիցենզավորման չափանիշերը, ինչի արդյունքում ավելի քան 90 մասնավոր բուհերից այսօր գործում են 34-ը: Ընդլայնվել են Կրթության պեղական փեսչության գործառույթները: Տեսչության կազմում գործում է նոր՝ «Մասնագիտական կրթության փեսչավորման» բաժինը: Բոլոր բուհերում ներդրվել և գործում են որակի ներքին ապահովման կենտրոններ: Հայաստանի Հանրապետության բուհերը ներկայացնում են որակի ներքին ապահովման վերլուծական հաշվեպիտղություններ:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների 2011թ. փեսչավորման և ուսումնասիրությունների ու սպուզումների հաշվեպիտղությունները հրապարակված են ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքում և կրթական պորտալում (www.edu.am, www.artedu.am), ինչպես նաև «Կրթություն» շաբաթաթերթում: ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների գրեթե 90%-ում) իրականացվել է ընդունելության, փոխադրման, փեղափոխման, ավարտման կարգերին համապատասխան սովորողների շարժի թեմափիկ սպուզում:

Մշակվել է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների կարողությունների, ինչպես նաև վերապատրաստման կարիքների գնահատման փաթեթը, որի բաղադրիչներից է կոռուպցիայի վերաբերյալ իրազեկման և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստումը: 2012 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմից համանման սեմինար քննարկումների և վերապատրաստումների մասնակցել են ընդհանուր թվով 30 մասնագեղներ:

Ոլորտում հանրակրթական դպրոցների կառավարման թափանցիկության, հրապարակայնության, հաշվեպիտղականության ու օրինականության բարձրացման ռազմավարական դրույթի շրջանակում հանրակրթական դպրոցների նոր օրինակելի կանոնադրությամբ ամրագրվել են դպրոցի կառավարման և վերահսկողության գործառույթներում ձևողական և մանկավարժական խորհուրդների, ինչպես նաև մեթոդական

միավորումների մասնակցությունն ապահովող դրույթները: Հանրակրթական դպրոցների նոր օրինակելի կանոնադրությամբ ամրագրվել են աշակերտական խորհուրդների լիազորությունները: Հասարակել է աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությունը, որով հստակեցվել են խորհրդի իրավասությունների և պարասխանադրության շրջանակները: Խստացվել է դպրոցում սահմանված գործառնական ընթացակարգերի պահպանման նկատմամբ հսկողությունը: Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչության կողմից 2011 և 2012 թվականներին ավագ դպրոցում սովորողների շարժի ուսումնասիրությունների համաձայն հանրապետության մասշտաբով 2012 թվականին 2011 թվականի համեմար սովորողների ընդունելությունը ավելացել է 0.8%-ով, իսկ տեղափոխությունը նվազել է 7%-ով:

Գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման համակարգերի թափանցիկության ու անկախության ապահովման ռազմավարական դրույթի շրջանակում սահմանվել է գիտելիքի գնահատման միասնական և անկախ համակարգ: Միասնական և ավարտական քննությունների թափանցիկությունը ապահովելու նպատակով 2012թ. սկզբին հրատարակվել են «Հայոց լեզու, գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաների շտեմարանները՝ օգտագործելով նաև հանրապետության փարբեր մարզերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների ներկայացրած թեմերի նմուշները (Ա և Բ մակարդակներով): 2013 թվականին դիմորդը նախապես տեղեկացված էր նշված առարկաների քննության ժամանակ իր առջև դրվող թեմերի առաջադրանքներին:

Կոռուպցիայի դեմ պայքարի կրթա-լուսավորչական քաղաքականության առանձին ծրագրերի իրականացման ռազմավարական դրույթի շրջանակում Կրթության ոլորտի թափանցիկության, հաշվետվողականության և հանրային իրազեկման բարձրացման նպատակով լուսաբանվել է կրթության ոլորտում իրականացվող հակակոռուպցիոն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքը: ՀՀ կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայքում գործում է հակակոռուպցիոն ծրագրերի տեղեկատվական էջ, որտեղ զեպրեղված են «Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012թթ. միջոցառումների համալիր ծրագիրը», ինչպես նաև այդ ծրագրի հետ կապված հաշվետվությունները: Նշված տեղեկատվությունը և իրականացված գործողությունների վերաբերյալ տեղեկությունները հրատարակվել են փարբեր լրատվամիջոցներով:

Միայն 2012թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայքում հրատարակվել է 600 լրատվական և տեղեկատվական նյութ՝ նպատակ ունենալով ապահովել նախարարության թափանցիկ և հաշվետվողական աշխատանքը, այդ թվում՝ հասարակությանը հուզող հարցերին արագ արձագանքելու միջոցով: Հետաքննվել է 18 հեռուստառեպորտաժ, հրատարակվել է 55 տեղեկատվական նյութ մամուլի ասուլիսների մասին և 75 տեղեկատվական նյութ՝ հակակոռուպցիոն ծրագրերի մասին:

Հինգերորդ, առողջապահության ոլորտում հանրային ֆինանսների կառավարման թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման ռազմավարական դրույթի շրջանակում վերանայվել և փոփոխվել է հիվանդանոցային ծառայությունների փաթեթը, ինչն արտացոլված է ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի մասին օրենքում և «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» բուժհաստատությունների հետ կնքված պայմանագրերում: Հիվանդանոցներում համավճարի սկզբունքի ներդրման համար հաստատվել են «Անհետաձգելի և գինեկոլոգիական բժշկական օգնության» բյուջեային ծրագրերը: Հավաստագրերի փրամադրման միջոցով պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման իրականացումը ներդրված է միայն ծննդօգնության և երեխաների (մինչև յոթ փարբեկան) բժշկական օգնության ծրագրերում:

Առողջապահության համակարգում գնագոյացման համակարգի բարելավման և ոչ պաշտոնական վճարումների համար նպաստավոր պայմանների վերացման ռազմավարական դրույթների շրջանակում համավճարի սկզբունքը ներդրվել է նաև «Ուռուցքաբանական և

արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» և «Մեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրերում: Հաստատվել է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների կողմից վճարովի հիմունքներով մատուցվող բժշկական ծառայությունների նվազագույն և առավելագույն կողմնորոշիչ գների սանդղակը՝ դիֆերենցված ըստ մարզերի և Երևան քաղաքի, և բժշկական ծառայությունների ինքնարժեքի ծախսային հողվածների կողմնորոշիչ նորմարիվները: Այդ նորմարիվներով աշխատում են միայն պետպատվերով բժշկական օգնություն և ծառայություն իրականացնող բուժկազմակերպությունները:

Սրվելային դրամաշրջանառության ծավալների կրճատման, առողջապահական ծառայությունների պետական պատվերի թափանցիկության, հասցեականության և հաշվեքվողականության բարձրացման, բուժհաստատությունների գործունեության թափանցիկության ու հաշվեքվողականության բարձրացման ռազմավարական դրույթի շրջանակում՝ պետական պատվերի պայմանագրային գումարները հաշվարկված են հիմք ընդունելով նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, որի ժամանակ պայմանագրային գումարներից ավել կատարված և չֆինանսավորված ծավալները, որպես պայմանագրային գումարի հաշվարկման հիմք չեն ընդունվում: 2012 թվականին բժշկական հաստատություններում պետական պատվերի հիմքերի անհամապատասխանությունը կատարողականի մեջ չի գերազանցում 1%-ի չափը: Փաստացի ցուցանիշների համաձայն այն կազմում է մինչև 1%:

Անհետաձգելի բժշկական միջամտություն պահանջող վիճակների և հիվանդությունների ցանկը վերանայված և հստակեցված է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի հունվարի 31-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող հիվանդությունների և վիճակների չափորոշիչը հաստատելու մասին» թիվ 144-Ա հրամանով:

Շրապ բժշկական օգնության ծրագրի պատշաճ ֆինանսավորման ապահովման ռազմավարական դրույթի շրջանակում շրապ բժշկական օգնության ծրագրով նախատեսված բյուջեային ֆինանսավորման ծավալները Հայաստանի Հանրապետության 2012թ. պետական բյուջեն առողջապահական ծրագրերում կազմում է շուրջ 3 մլրդ ՀՀ դրամ, ինչը կազմում է ՀՀ պետական բյուջեի առողջապահական ծրագրերի ընդհանուր ծախսերի (62.5 մլրդ ՀՀ դրամ) 4.8%-ը: Չարդարացված կանչերի ցուցանիշը 2012թ.-ին կազմել է 1.36%:

Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատությունների գործունեության թափանցիկության, հաշվեքվողականության և օրինականության ռազմավարական դրույթի շրջանակում 2012 թվականին ներդրվել են ապացուցողական բժշկության վրա հիմնված կլինիկական ուղեցույցեր և չափորոշիչներ:

Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության գործունեության թափանցիկության, հաշվեքվողականության բարձրացման ռազմավարական դրույթի շրջանակներում հաստատվել և ներդրվել են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության ենթակայության փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ների մանրէաբանական, սանիտարա-քիմիական, մակաբուժաբանական լաբորատորիաների և ֆիզիկական գործոնների մակարդակների չափման ժամանակ կիրառվող (թվով 39) հաշվառման ձևաթղթերը, ինչպես նաև իմունականխարգելման ոլորտի վարչական վիճակագրական հաշվեքվական ձևերը:

Վեցերորդ, դատարան համակարգում, ընդհանուր իրավասության դատարանների դատավորների աշխատավարձի դրույքաչափի բարձրացման ուղղությամբ ուսումնասիրվել է լավագույն միջազգային փորձը:

Դատավորների շահերի բախման, եկամուտների և գույքի հայտարարագրման թափանցիկության և վերահսկելիության ապահովման ուղղությամբ 2012թ.-ին ընդունվել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որով կարգավորում է դատավորների շահերի բախման ինստիտուտը:

Դարավորների թեկնածուների նախնական ուսուցման և դարավորների վերապարաստման գործընթացի բարելավման միջազգային փորձի հիման վրա օրենսդրական նախագծերով դարավորի, դարախազի թեկնածությունների ուսուցման ժամկետը «Հարդարադարության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով սահմանվել է առնվազն 7 ամիս, բայց ոչ ավելի, քան 10 ամիս: Օրենքն ընդունվել է 2013թ. հունիսի 3-ին:

Յոթերորդ, իրավաբանական անձանց պեղական գրանցման ոլորտում իրավաբանական անձանց պեղական գրանցման գործընթացի պարզեցման ուղղությամբ 2012թ. մարտի 19-ին ընդունվել է «Իրավաբանական անձանց պեղական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքը: Օրենքը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ «Իրավաբանական անձանց պեղական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհարձեռնարկարտերերի պեղական հաշվառման մասին» անվանումով: Նախագծում իրացվել է էլեկտրոնային ռեգիստրի գաղափարը: Օրենքի ընդունումից հետո պեղական գրանցման համար այլ պեղական մարմիններից պահանջվող փաստաթղթերը ստացվում են միայն իրավաբանական անձանց պեղական ռեգիստրի գործակալության միջոցով: Կրճարվել են իրավաբանական անձանց պարավորությունների բացակայությունը հավաստող փրկեկանքների փրամադրման և լուծարման գրանցման ժամկետները: Գործակալությունը լուծարման գրանցում կատարելու մասին դիմում ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հարցում է ուղարկում հարկային մարմին՝ պեղական բյուջեի և սոցիալական ապահովագրության գծով իրավաբանական անձի պարավորությունների բացակայությունը հավաստելու վերաբերյալ: Հարցումն ուղարկվում է ստացումը հաստատելու հնարավորություն Կրճարվել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունն ապահովող համակարգի միջոցով: Հարկային մարմինները պարասխանում են հարցմանը այն ստանալու օրվանից հետո՝ 20 օրվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետության արդարադարության նախարարության իրավաբանական անձանց պեղական գրանցման ռեգիստրի գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ վերանայվել են պեղական ռեգիստրի գործակալության մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության մեթոդները:

Ութերորդ, դարախազի ակտերի հարկադիր կատարման ոլորտում հարկադիր կատարողների կողմից պարտապանի գույքը հայտնաբերելու կարողությունների բարձրացման ուղղությամբ ներդրվել է պարտապանի գույքի հայտնաբերմանն ուղղված հարցումների էլեկտրոնային համակարգ:

2012 թվականի դրությամբ համակարգին միացված են 22 առևտրային բանկեր, Հայաստանի Հանրապետության արդարադարության նախարարության իրավաբանական անձանց պեղական ռեգիստրի գործակալությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պեղական ծառայությունը: Դրա արդյունքում պարտապանի գույքը հայտնաբերելու համար պահանջվող միջին ժամկետը նախորդ փրկա համեմատությամբ 15 օրից կրճարվել է 2 օրվա: Հարկադիր կատարողների կողմից պարտապանի գույքը հայտնաբերելու դեպքերի հարաբերությունը դարախազի ակտերի հարկադիր կատարման վարույթի շրջանակներում գույքի հայտնաբերման դեպքերի նկատմամբ կազմել է 13.1%:

Բարելավվել են դարախազի ակտերի հարկադիր կատարման նկատմամբ Հայաստանի Հանրապետության արդարադարության նախարարության շրջանակներում իրականացվող վերահսկողության մեխանիզմները: Վերանայվել են դարախազի ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության նկատմամբ վերահսկողության մեթոդներն ու ընթացակարգերը: Սահմանվել է դարախազի ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության արդյունքների ամփոփման ընթացակարգ, ինչպես նաև՝

դարական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ծառայողների նկատմամբ կարգապահական վարույթի նյութեր նախապատրաստելու և վարույթ հարուցելու միասնական կարգը: Դրա արդյունքում 2012թ.-ին դարական ակտերի հարկադիր կատարման ծառայության 393 ծառայողից 11-ի նկատմամբ կիրառվել է կարգապահական փույծ, 5-ը հեռացվել է աշխատանքից, իսկ 45-ի նկատմամբ կիրառվել է խրախուսանքի միջոց:

Իններորդ, **նստիկանության ոլորտում** ճանապարհային ոստիկանության գործունեության թափանցիկության և հրապարակայնության բարձրացման ռազմավարական դրույթի շրջանակներում սահմանվել են ոստիկանության նյութական խրախուսման և փեխնիկական զարգացման արտաբյուջեֆային ֆոնդի ձևավորման և միջոցների ծախսման թափանցիկությունն ապահովող ընթացակարգեր:

Ճանապարհային ոստիկանությունում ներդրվել է ճանապարհափորանսպորտային պարահարների գրանցման և դրանց վերաբերյալ վիճակագրության վարման համակարգչային ծրագիր: ճանապարհափորանսպորտային պարահարների վերաբերյալ փյալները էլեկտրոնային փարբերակով փրամագրվում են ապահովագրական ընկերություններին և լուսաբանվում են զանգվածային լրատվության միջոցով: Կարարելագործվել է բնակչության պետական ռեգիստրի համակարգը: Կանոնակարգվել է բնակչության պետական ռեգիստրի փյալների օգտագործումը հանրային ծառայություններ մատուցելիս: Բնակչության պետական ռեգիստրի բազայում ներդրվել է հանրային ծառայությունների համարանիշների համակարգը, և քաղաքացուն հարկացվող ծառայությունների համարանիշը օրենքով սահմանված անհարական փյալների հիման վրա գեներացվում է ավտոմատ եղանակով: Կարարելագործվել է ոստիկանության ծառայողների գործողությունների բողոքարկման ընթացակարգերի մատչելիությունը: 2012թ.-ին Հայաստանի Հանրապետության կառավարության «ՀՀ ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» թիվ 1672-Ն որոշմամբ սրեղծվել է ոստիկանության ծառայողների նկատմամբ ծառայողական քննություն իրականացնող մշտական գործող հանձնաժողով: Ոստիկանության ծառայողների գործողությունների բողոքարկման ընդհանուր թվաքանակը 2012թ.-ին կազմել է 1576, իսկ ծառայողական քննությունների թիվը՝ 1802: Հայաստանի Հանրապետության ոստիկանության նոր՝ www.police.am ինտերնետային կայքէջի «Օգնություն քաղաքացիներին» բաժնում (5,517 այցելություն) քաղաքացիներն ունեն Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին, Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի փեղակալներին կայքից դիմումներ ուղարկելու հնարավորություն:

Ոստիկանության միջանկյալ օղակների և ծառայող-քաղաքացի շփման բարդությունները կրճատելու նպատակով պարգեցվել է վարորդական վկայական սրանալու քննություններ ընդունելու, փրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման, հաշվառման, համարանիշների և վկայագրերի հարկացման, ինչպես նաև վարորդական վկայականների փրման, փոխանակման ընթացակարգերը: Այս ծառայությունները կազմակերպվում են մասնագիտացված և փեխնիկապես հագեցած կառույցներում: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի համարեղ նախաձեռնությամբ պետական եկամուտների կոմիտեի ավտոփրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսային կեղի վարչական փրամաքում սրեղծվել է ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Երևանի հաշվառման-քննական բաժնի սպասարկման կեղ:

Անձնագրային և վիզաների վարչության Աշտարակի, Մասիսի, Արտաշատի, Արմավիրի անձնագրային բաժանմունքներում և Ավանի, Դավիթաշենի անձնագրային խմբերում, Թումանյանի, Բագումի, Ախուրյանի, Տաշիրի, Նոյեմբերյանի, Կապանի, Միսիանի, Գորիսի, Վայքի, Եղեգնաձորի, Վարդենիսի անձնագրային բաժանմունքներում փեղարղվել են անձնագրային ծառայությունների մատուցման համար նախապետված պետական փուրբերը, վարչական փուզանքները և այլ վճարներն ընդունող էլեկտրոնային վճարային փեղմիխալներ, ինչի շնորհիվ զգալիորեն արագացել է քաղաքացիների սպասարկման արագությունը:

Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության մասնաշենքում գործարկվել է անլար ինտերնետ (WIFI) համակարգ, ինչը հնարավորություն է ընձեռել վարչություն այցելող քաղաքացիներին անվճար օգտվել ինտերնետից: Ներդրվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության և հատուկ կացության ռեգիստր՝ անհատական տվյալների էլեկտրոնային համակարգ:

Ներդրվել է սեփականափորոջ դիմումի հիման վրա բնակելի տարածության նկատմամբ օգտագործման իրավունք չունեցող անձին կարճ ժամանակում հաշվառումից հանելու պարզեցված ընթացակարգ: Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 1435-Ն որոշմամբ բնակչության պետական ռեգիստրում անձանց հաշվառման և հաշվառումից հանելու գործընթացը պարզեցվել է, համաձայն որի անձնագրային ծառայությունը բնակելի տարածության նկատմամբ գույքային իրավունք ունեցող անձանց ցուցակը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրից պարզում է էլեկտրոնային եղանակով:

Անձնագրային բոլոր ծառայություններում (բացառությամբ Դավիթաշենի և Ջանաքեռ-Չեյթունի), տեղադրվել են անձը հաստատող էլեկտրոնային փաստաթղթերի համակարգեր, ինչը հնարավորություն է տվել սպասարկել մարզերի բնակիչներին ևս, այդ թվում՝ կենսաթոշակային բարեփոխումներով պայմանավորված:

Ստեղծվել է արագ արձագանքման «Թեժ գիծ» ծառայությունը: Հայաստանի Հանրապետության ոստիկանության «police.am» կայքէջից օգտվողների թիվը 2012թ. ին կազմում է մոտ 46092, իսկ «passportvisa.am» կայքէջ մուտքի թիվը 2012թ. ընթացքում հասել է 303739-ի:

Տասներորդ, հանրային ծառայության ոլորտում 2012 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որը կանոնակարգում է հանրային ծառայողների իրավունքների ու պարտականությունների, հավաքագրման, առաջխաղացման և պաշտոնաթողության, վարքագծի և շահերի բախման միասնական սկզբունքները: Առանձին բաժնով կանոնակարգվել է ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկան, շահերի հայտարարագրման մեխանիզմներն ու շահերի բախման դեպքերի վարույթի իրականացման կարգերը: Չեղարկվել է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց հանձնաժողովը և ապահովվել է հանձնաժողովի բնականոն գործունեությունը: Գործարկվել է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց ռեեստրը, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց հայտարարագրման համակարգը: Ավելի քան 680 բարձրաստիճան պաշտոնատար անձինք և նրանց հետ փոխկապակցված անձինք հանձնաժողովին են ներկայացրել գույքի, եկամուտների հայտարարագրեր: Առաջին անգամ բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրերը հրապարակայնացվել են հանձնաժողովի կայքէջում (www.ethics.am) և հասանելի են հասարակության լայն շերտերին: Հանձնաժողովն առանց արձագանքման չի թողել որևէ դիմում կամ հանձնաժողովին հասցեագրված նամակ, առաջարկ կամ մամուլի հարցազրույց:

Այդուհանդերձ, պետք է հաշվի առնել, որ մոնիտորինգն իրականացվել է հենց պարասխանաբառու մարմինների կողմից՝ սեփական գործունեության ինքնազննատման միջոցով: Մյուս կողմից, կատարված մոնիտորինգը վարչական է և չի ներառում կատարողականի բովանդակային մոնիտորինգի համակարգ: Ներկայացված հաշվետվությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ արդյունքի կատարման վերաբերյալ եզրահանգումներ կատարելու համար հիմք ծառայած ցուցիչների և գործիքների վերաբերյալ տեղեկություններ առկա չեն: Ավելին, ներկայացված հաշվետվություններում տրված չեն զննատարականներ միջոցառման արդյունքի կամ ազդեցության վերաբերյալ, ինչն անկողմնակալ դիրարկողին հնարավորություն չի տալիս վերազննատմելու մոնիտորինգի օբյեկտիվությունը և հավաստիությունը:

Այսպես, հարկային ոլորտում՝ որպես ամբողջությամբ կատարված միջոցառման արդյունք նշվում է. «հարկային ծառայողների և հարկ վճարողների միջև անմիջական շփումները նվազեցնելու ուղղությամբ միջազգային լավագույն փորձի հիման վրա ներդրվել է հարկային հանցագործությունների քննության ընթացքում կոռուպցիայի հանցակազմը վեր հանելու և

վնդեաւական հանցագործությունների և կոռուպցիոն իրավախախտումների կապերը բացահայտելու մեթոդներ և ընթացակարգեր», սակայն հաշվեկրկությունը չի անդրադառնում այն հարցին, թե ո՞րն է այդ մեթոդների և ընթացակարգերի էությունը: Կամ առանց որևէ գնահատականի փաստվում է, որ «2011թ. նկատմամբ 2012թ.-ին նվազել է հարկ վճարողների կողմից գանգադարկման հանձնաժողով ներկայացված բողոքների թիվը (269-ից 205), մինչդեռ ի օգուտ հարկ վճարողի ընդունված որոշումների ընդհանուր թիվը մնացել է նույն 36% մակարդակին», այնինչ բողոքների քանակի նվազումը կարող է վկայել նաև գանգադարկման հանձնաժողովի նկատմամբ անվտանգության մեծացման մասին: Այս վարկածը կարելի է ստուգել, մասնավորապես, բողոքների մերժումը դատական կարգով բողոքարկելու դեպքերը և հայցերի բավարարման քանակը վերլուծելով:

Կրթության ոլորտում որպես արդյունք արձանագրվել է այն, որ «Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (գրեթե 90%-ում) իրականացվել է ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտման կարգերին համապատասխան սովորողների շարժի թեմաթիկ ստուգում» կամ «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունն առաջինն է պետական կառույցներից, որը բացել և սպասարկում է «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ընդունարան» ֆեյսբուքյան էջը, որտեղ ստացված բոլոր ահազանգերը ստացել են համապատասխան ընթացք»): Վերոշարադրյալից պարզ չէ ո՞չ համապատասխան ստուգումների նպատակը, ո՞չ հեղանակները, ո՞չ ֆեյսբուքյան էջում ստացված ահազանգերի քանակը, ո՞չ դրանց բնույթը, իսկ «համապատասխան ընթացք ստանալ» երևույթն ընդհանրապես չափելի կամ գնահատելի չէ:

Դատական համակարգում ստացված արդյունքներից մեկը ձևակերպված է հետևյալ կերպ. «ընդհանուր իրավասության դատարանների դատավորների աշխատավարձի դրույքաչափի բարձրացման ուղղությամբ ուսումնասիրվել է լավագույն միջազգային փորձը», իսկ իրավաբանական անձանց գրանցման ոլորտում նշված է, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ վերանայվել է պետական ռեգիստրի գործակալության մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության մեթոդները»: Նման ինքնամոփոխ ձևակերպումներն էապես նվազեցնում են այս կամ այն արդյունքի օբյեկտիվ գնահատման հնարավորությունները, ինչպես նաև՝ նման արդյունքի հետ կապված նոր միջոցառումների պլանավորման արդյունավետությունը:

Այնուամենայնիվ, վերոնշյալ նկարագրումներով հանդերձ, ստորև ներկայացնում ենք պետական մարմինների գնահատմամբ ամբողջությամբ կատարված միջոցառումների մոնիտորինգի հիմնական արդյունքները.

3.1.3 2009-2012թթ. ռեթացիվ տարեկան և քառամյա ամփոփիչ հաշվեկրկությունների միջև առկա հակասությունները

Պետական մարմինների կողմից ներկայացված ամփոփիչ հաշվեկրկություններում էական հակասություններ կան մինչ այդ պահը ներկայացված տարեկան հաշվեկրկությունների փվյալների հետ: Հակասություններ և անճշություններ առկա են գրեթե բոլոր հաշվեկրկություններում:

Այսպես, Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ներկայացված ամփոփիչ հաշվեկրկության համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում կատարման ենթակա արդյունքների թիվը եղել է 22, որից կատարվել են.

- ամբողջությամբ՝ 21-ը.
- մասնակիորեն՝ 1-ը.
- չեն կատարվել՝ 0-ն:

Մինչդեռ նույն մարմնի կողմից 2010, 2011 և 2012թթ. վերաբերյալ ներկայացված փարեկան հաշվետվությունների փյալներն ամփոփելով՝ րեսնում ենք, որ ամբողջությամբ կատարված արդյունքների թիվը կազմում է 10:

Նույն կերպ, մասնակիորեն կատարված արդյունքների թիվը 3 փարվա համար կազմում է 24: Եթե նույնիսկ ընդունենք այն հնարավորությունը, որ յուրաքանչյուր փարի մասնակիորեն կատարված արդյունքներն ամբողջությամբ կատարվել են հաջորդ փարիներին, ապա ամբողջությամբ կատարված արդյունքների թիվը յուրաքանչյուր փարի պետք է բավականին բարձր լիներ, ինչը չի նկատվում:

Տվյալների հակասության մեկ այլ ցայտուն օրինակ է առկա Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած հաշվետվություններում:

Այս մարմնի ամփոփիչ հաշվետվության համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում կատարման ենթակա արդյունքների թիվը եղել է 103, որից կատարվել են.

- ամբողջությամբ 99-ը.
- մասնակիորեն 2-ը.
- չեն կատարվել 2-ը:

Ըստ այդմ, պետական եկամուտների կոմիտեի արդյունքների կատարման (ամբողջությամբ) ցուցանիշը բավականին բարձր է 96%:

Մինչդեռ 3 փարվա հաշվետվություններում միանգամայն այլ պարկեր ենք րեսնում:

Նույն մարմնի կողմից 2010, 2011 և 2012թթ. վերաբերյալ ներկայացված փարեկան հաշվետվությունների փյալներն ամփոփելով՝ րեսնում ենք, որ ամբողջությամբ կատարված արդյունքների թիվը կազմում է 59 (40-ով պակաս ամփոփիչ հաշվետվության 99-ից):

Նույն կերպ, մասնակիորեն կատարված արդյունքների թիվը 3 փարվա համար կազմում է 13, մինչդեռ ամփոփիչ հաշվետվության մեջ այս ցուցանիշը 2 է: Եթե նույնիսկ ընդունենք, որ 2010թ.-ի 7 և 2011թ.-ի 2 մասնակիորեն չկատարված արդյունքներն ամբողջությամբ կատարվել են հետագա փարիներին, ապա, միևնույն է, 2012թ.-ին եղել են 4 մասնակիորեն կատարված արդյունքներ, որոնք առնվազն պետք է արտացոլվեին ամփոփիչ հաշվետվության մեջ: Հետաքրքիր է, որ պետական եկամուտների կոմիտեի փարեկան բոլոր հաշվետվություններում չկատարված արդյունքների թիվը 0 է, մինչդեռ ամփոփիչ հաշվետվության մեջ 2:

Տարեկան հաշվետվությունների ուսումնասիրությունը նաև ցույց է րաիս, որ կատարողականի գնահատումը պարշած չի իրականացվել, իսկ ներկայացված հաշվետվություններն ամբողջական և ճշգրիտ չեն: Տրված չէ իրալիճակի չաիեյի նկարագիրը: Պարասխանապու մարմիներնի կողմից արդյունքների գնահատման մեթոդաբանությունը հստակեցված չէ, իսկ գնահատման չաիանիշերն ու գործիքները մնում են չբացահայտված: Օրինակ՝ քաղաքական կոռուպցիային առնչվող ռազմավարության 56-րդ, 57-րդ և 58-րդ դրույթներով նախատեսված միջոցառումների և ակնկալվող արդյունքների վերաբերյալ բերված է հերկյալ մեկնաբանությունը՝ «Կատարվել է մասնակիորեն»: Որպես արդյունքի մասնակի կատարման հիմնավորում ներկայացվել է հերկյալ մեկնաբանությունը. «Քաղաքական որոշման համաձայն ՀՀ Ազգային ժողովի հեր կապված օրենքների նախագծերը պետք է մշակվեն ՀՀ Ազգային ժողովի աշխարակազմի կամ ԱԺ պարզամավորների կողմից»: Նմանապես, թիվ 16.6 միջոցառման ակնկալվող արդյունքի (գանգարարկման ընթացակարգերի նկարմամբ արտաքին րնրեսական գործունեության մասնակիցների կողմից վստահությունը նախորդ փարվա նկարմամբ աճել է) առնչությամբ րրվել է «կատարված է ամբողջությամբ» գնահատականը: Արդյունքի կատարման մեկնաբանության մեջ որևէ կերպ չի արտացոլվում վստահության հնարավոր աճը, այլ անդրադարձ է կատարվում բուն միջոցառմանը: Թիվ 19.3 միջոցառման առաջին արդյունքի (դպրոցներում պարբերական գույքագրման ընթացակարգերը և էեկրոնային հաշվապահության պրակրիկան ներդրված են) վերաբերյալ առկա է «իրականացված է մասամբ» բնորոշումը: Մակայն մեկնաբանությունից պարզ է դառնում, որ «... հանրապետությունում էեկրոնային հաշվապահություն վարում են դպրոցների ընդհանուր թվի շուրջ 2%-ը»: Քանի որ արդյունքը ենթադրում է «էեկրոնային հաշվապահության ներդրված

արակերիկա», ապա ընդամենը 2%-ը, կարծում ենք, խիստ նվազ է՝ արդյունքը մասամբ իրականացված համարելու համար:

Մյուս կողմից՝ արդյունքի կարարման և մոնիտորինգային ցուցիչի վերաբերյալ փոփոխությունները ներկայացված հաշվետվություններում հաճախ բացակայել են: Օրինակ՝ դադարակա համակարգին վերաբերող ռազմավարության 37-րդ դրույթի թիվ 37.1 միջոցառման մոնիտորինգի ցուցիչով նախատեսված է՝ «դադարակա համակարգում աշխատողների միջին աշխատավարձ, փոխու՝ մասնավոր իրավաբանական ընկերություններում աշխատողների միջին աշխատավարձի նկատմամբ»: Մակայն ցուցիչի վերաբերյալ փոփոխությունները Արդարադատության նախարարությունը չի ներկայացրել՝ պարզապես անհետացելով, որ «մասնավոր իրավաբանական ընկերություններում աշխատողների միջին աշխատավարձի վերաբերյալ փոփոխությունները չեն հավաքագրվում պետական մարմինների կողմից»:

Այսպիսով, փորձեր հաշվետվությունների փոփոխության միջև առկա են էական փոփոխություններ, միջոցառումների կարարողականի վերաբերյալ պարզաճ գնահատումներ չեն իրականացվել, ինչը կասկածի փակ է դնում ներկայացված հաշվետվությունների լիարժեքությունը և արժանահավատությունը:

3.1.4 Պետական մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության հրահանգման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի առումներին տեղ կամ մասնակի չկատարման պատճառներ

Պետական մարմինների կողմից մասնակիորեն կատարված արդյունքների միջին ցուցանիշը կազմում է 16.4%, իսկ չկատարված արդյունքների միջին ցուցանիշը կազմում է 18.3%: Հաշվետվությունների ներկայացման սահմանված ձևաչափը պահանջում է, որ հաշվետու պետական մարմինները վեր հանեն և մարտնչեն հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի նախանշված արդյունքների չկատարման կամ մասնակի կատարման պատճառները:

Թեև առանձին դեպքերում պատասխանատու մարմինները վեր չեն հանել և մեկնաբանել արդյունքի չկատարման կամ մասնակի կատարման պատճառը (որպես փոփոխական օրինակ՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հաշվետվության մեջ մասնակի կատարված թիվ 108.2 արդյունքի վերաբերյալ պարզապես նշված է այն հանգամանքը, որ «դեռևս մշակված չեն հակակոռուպցիոն թեմատիկ նյութեր մագիստրոսական կրթական ծրագրերում ներառելու համար»), այնուհանդերձ, որպես կանոն, պետական մարմիններն ամբողջով են հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի նախանշված արդյունքների չկատարման կամ մասնակի կատարման պատճառները: Դրանք են.

1. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագրի թերի պլանավորումը՝ միջոցառումների առումով: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից իրականացման ենթակա թիվ 18.4 արդյունքը սահմանված է հետևյալ կերպ՝ «կրթության ոլորտում շահերի բախման ու հայրաբարությունների կիրառման կարգը սահմանված է»: Նախարարությունը գտնում է, որ «հանրային ծառայության ոլորտում շահերի բախման ու հայրաբարությունների կիրառման գործընթացը կրթության ոլորտում ներգրավված անձանց վրա չի փարածվում», հետևաբար, անպետք էր միջոցառումների ծրագրում նմանատիպ միջոցառման ձևակերպումը:

2. Միջոցառումների ծրագրի թերի պլանավորումը՝ արդյունքի իրականացման պատասխանատու մարմնի ոչ ճիշտ մատրանշման առումով: Օրինակ՝ ազգային վիճակագրական ծառայությունը պետք է մշակեր կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ վիճակագրական վերլուծության մեթոդիկա: Մակայն ծառայության պարզաբանման մեջ առկա է, որ «կոռուպցիոն հանցագործություն» հասկացությունը վիճակագրական մեթոդաբանության առարկա չէ և հանդիսանում է իրավագիտության առարկա, որի վերաբերյալ փոփոխություններ է

ամփոփում դարախազությունը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հաշվետվության մեջ ևս նշված է, որ այդ մարմնի պարասխանաբերության ներքո գրավող արդյունքը («Ընտրակաշառք բաժանողներն ու վերցնողները հայտնաբերվել և պարասխանաբերության են ենթարկվել») դուրս է հանձնաժողովի իրավասությունների շրջանակից:

3. **Միջոցառումների ծրագրով սահմանված արդյունքի կատարման կախվածությունը կատարման օրենսդրական փոփոխություններից/կամ օրենսդրական դաշտի անկատարությունից/բացակայությունից:** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի հաշվետվությունում նշված է, որ արդյունքներից մեկով սահմանված է եղել «մրցույթի շնորհիվ հաղթահարած պաշտոնի հավակնորդներից մեկի ընտրության և նշանակման հարակից չափորոշիչների մշակումը»: Մինչդեռ, «օրենսդրությունը նախատեսում է... երեք հաղթող մասնակիցների ընտրության չափանիշեր»:

4. **Միջոցառումների ծրագրով սահմանված արդյունքի իրականացման ոչ հիմնավոր վերջնաժամկետների սահմանում:** Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից որպես արդյունքի չկատարման պարճառ նշված է «կատարման վերջնաժամկետների՝ ժամանակավրեպ լինելը»:

5. **Միջոցառումների ծրագրով սահմանված արդյունքի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների անբավարարությունը:** Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից իրականացման ենթակա թիվ 18.3 արդյունքի մասնակի իրականացման պարճառ է նշվել «բավարար ֆինանսական ռեսուրսների» բացակայությունը: Մեկ այլ դեպքում Հայաստանի Հանրապետության աշխարհաբանության և սոցիալական հարցերի նախարարության կողմից արդյունքը չկատարելը բացատրվել է «ֆինանսավարկության և ճգնաժամի հետևանքով ՀՀ փոփոխությունում սրտեղծված ֆինանսական դժվարություններով»:

6. **Միջոցառումների ծրագրով սահմանված որոշ արդյունքների գնահատման համապարասխան մեխանիզմների բացակայությունը:** Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից իրականացման ենթակա թիվ 19.3 արդյունքը ձևակերպված է հետևյալ կերպ. «Կարողում անհարգելի բացակայությունների թիվը նվազել է 10 փոկոսային կետով»: Մինչդեռ նախարարությունը պարզաբանել է, որ «կրթության ոլորտում չկա մեխանիզմ այդ ցուցիչի արժեքի հաշվարկման համար»:

7. **Արդյունքի կատարման բովանդակային փոփոխությունների ներմուծում՝ պայմանավորված պետական այլ ռազմավարությունների/ծրագրերի մշակմամբ:** Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը մեկնաբանել է, որ «ՀՀ դատական-իրավական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի ընդունումը հետաձգեց անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների կատարումը, քանի որ ռազմավարական ծրագրի ընդունմամբ կկատարվեն համալիր օրենսդրական փոփոխություններ»: Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության մասով նախատեսված միջոցառումների չկատարվածությունը բացատրվել է «... ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների ընթացքով»:

Թեև պարասխանաբեր պետական մարմինների կողմից բերվել են արդյունքների չկատարման կամ մասնակի կատարման պարճառների վերաբերյալ հիմնավորումներ, դրանց մեծամասնությունն արդյունքի չափանիշի «արդարացումների» փորձեր են, պարճառաբանություններ, որոնք չեն արագացրել արդյունքի կատարմանը խոչընդոտող օբյեկտիվ պարճառներ:

Առանձին դեպքերում վկայակոչվում է օրենսդրական դաշտի անկատարությունը, մինչդեռ նման անկատարությունը հաղթահարելու օրենսդրական նախաձեռնություններով հանդես գալու որևէ փորձ անգամ չի ել ձեռնարկվել: Դատական դեպարտամենտի հաշվետվության մեջ չկատարված արդյունքների կատարմանը խոչընդոտած պարճառների շարքում կրկնվում է «Համապարասխան օրենսդրական փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագիծ շրջանառության մեջ չի դրվել» ձևակերպումը: Թեև այս ձևակերպումից պարզ է դառնում, որ արդյունքը չի կատարվել նախագծի շրջանառության մեջ չդրվելու պարճառով, սակայն պարզ չէ,

թե ո՞րն է եղել նախագիծը շրջանառության մեջ չդնելու իրական պատճառը: Պարզ չէ՝ արդյո՞ք դա պատասխանաբար մարմնի՝ դարական դեպարտամենտի թերացումն է, թե՛ պայմանավորված է այլ մարմինների աշխատանքային թերացումներով:

Մի շարք միջոցառումների չկատարման պատճառներն անհարկի վերագրվել են այլ գերատեսչությունների կամ մարմինների՝ այն դեպքում, երբ բոլոր պետական մարմինները կառավարության որոշման նախագծի քննարկման և հաստատման գործընթացում ներկայացրել են իրենց համաձայնություններն ու առարկությունները միջոցառումների վերաբերյալ: Վերջնական որոշումները կայացվել են Կառավարության նիստում՝ պատասխանաբար մարմինների հետ միջոցառումների համաձայնեցման արդյունքում: Հետևաբար, հետաքրքրական է, որ նմանատիպ խնդիրները քննարկման առարկա են դառնում միայն Ծրագրի ավարտին, իսկ Ծրագրի մեկնարկի սկզբնական փուլում անուշադրության են մարնվում: Ավելին, առաջադրված խնդիրների լուծմանն ուղղված քայլեր Ծրագրի իրագործման ընթացքում չեն ձեռնարկվել, մինչդեռ գոյություն ունեին ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ. հոկտեմբերի 8-ի թիվ 1272-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու ճանապարհով «խոչընդոտները» վերացնելու իրավական գործուն մեխանիզմներ:

3.1.5 Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրում առկա թերությունները

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի փաստաթղթային ուսումնասիրությունը թույլ է տալիս կատարել որոշ եզրահանգումներ դրանում առկա թերությունների մասին: Մասնավորապես.

1. Ծրագիրը մշակելիս կոռուպցիոն հիմնախնդիրները, կոռուպցիայի պատճառները, դրսևորման ձևերը թերի են բացահայտվել²¹: Օրինակ՝ ռազմավարության 17-րդ դրույթով նախատեսված է՝ «ապահովել կրթության ոլորտի զարգացման քաղաքականության շրջանակներում կոռուպցիոն ռիսկերի շարունակական գնահատումն ու դրանց կանխարգելումը»: Այս դրույթի ակնկալվող արդյունքներում նախատեսված է կրթության փաթեթի մակարդակներում առկա կոռուպցիոն ռիսկերի գնահատում և դրանց կրճատման դրույթների սահմանում: Այսինքն՝ միջոցառումների ծրագիրը նախատեսում է ռիսկերի հայտնաբերում և դրանց հաղթահարմանն ուղիների փնտրություն, մինչդեռ ռիսկերը պետք է գնահատված լինեին նախքան միջոցառումների ծրագրի մշակումը: Ստացվում է, որ կոռուպցիոն ռիսկերի կրճատման դրույթները պետք է մշակվեն ծրագրի իրականացմանը զուգահեռ, հընթացս, ինչը վիճահարույց մոտեցում է: Ավելին, հանրակրթության ոլորտում ռիսկերի գնահատումն ու դրանց կրճատման դրույթների մշակումը նախատեսված է որպես 2012թ. արդյունք, որը միջոցառումների ծրագրի վերջին տարին է: Թեև կրթության ոլորտում ձևակերպված միջոցառումները կարող են դիտարկվել որպես մասնակիորեն վերհանված խնդիրների հաղթահարմանն ուղղված գործողություններ, այդուհանդերձ համապատասխան ոլորտում կոռուպցիայի պատճառների և դրսևորումների վերաբերյալ համակողմանի և օբյեկտիվ հետազոտության բացակայության պարագայում նախատեսված միջոցառումների նպատակայությունը մնում է խնդրահարույց: Բացի այդ՝ Ծրագրի կենսագործման ընթացքում չի ապահովվել նոր կոռուպցիոն ռիսկերի և պատճառների

²¹ Տնօրենական համակագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի համար հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան գործողությունների ծրագրի 10-րդ մոնիթորինգի նիստում՝ 2011 թվականի սեպտեմբերի 30-ին ընդունված Հայաստանի վերաբերյալ մոնիթորինգի երկրորդ զեկույցը ևս առաջարկում է ՀՀ իշխանություններին իրականացնել կոռուպցիայի պատճառների, ըստ ոլորտների դրսևորման ձևերի մանրակրկիտ ուսումնասիրություն:

ուսումնասիրության հիման վրա Ծրագրում նախանշված միջոցառումների փոփոխումը կամ համալրումը:

2. Հակակոռուպցիոն ծրագրով կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու համար մի շարք ոլորտներում նախատեսվել են հիմնականում օրենսդրական փոփոխություններ և/կամ վերապարաստումներ ենթադրող միջոցառումներ, որոնք չեն կարող էական ազդեցություն ունենալ կոռուպցիոն ռիսկերի մակարդակի վրա: Օրինակ, դատական համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարական միջոցներից մեկը հակակոռուպցիոն ծրագրի 4.7 ենթազիխում (դատական համակարգ) նախատեսված «դատավարական ֆորմալ ընթացակարգերի պարզեցումն ու դատարանների բեռնաթափումն է»: Սակայն թե՛ ռազմավարական ծրագրում, թե՛ միջոցառումների ծրագրում այս միջոցի գործադրման միակ եղանակ է նախատեսվել վեճերի լուծման այլընտրանքային միջոցների կիրառումը: Իր հերթին, այս դրույթի իրականացման համար պլանավորվել է միայն «հստակեցնել ընտանեկան, աշխատանքային վեճերով արբիտրաժի կիրառման օրենսդրական շրջանակները» միջոցառումը: Այսպիսով, եռաստիճան պլանավորման միջոցով «դատավարական ֆորմալ ընթացակարգերի պարզեցումն ու դատարանների բեռնաթափումը» հանգեցվել է միայն «օրենսդրական շրջանակների հստակեցմանը»: Մինչդեռ ակնհայտ է, որ դատարանների բեռնաթափումը կարող է նվաճվել օրենսդրական հստակեցման հետ մեկտեղ նաև այլ միջոցների գործադրման պարագայում, օրինակ՝ դատական գործերի բաշխման առավել արդյունավետ համակարգի ներդրմամբ:
3. Ծրագրով խնդիրները ձևակերպելիս չի ապահովվել արդյունքների, ինդեքսների և միջոցառումների ուղղակի կապը: Օրինակ՝ թիվ 12.2 միջոցառմամբ նախատեսված է «կատարելագործել հարկային ծառայողների վերապարաստման համակարգը», մինչդեռ ակնկալվող արդյունքը ձևակերպված է հետևյալ կերպ. «300 հարկային ծառայողներ վերապարաստված են»: Ակնկալվող արդյունքը համարժեք չէ միջոցառմանը, քանի որ վերապարաստման համակարգի կատարելագործումը ենթադրում է համակարգի սկզբունքների, ընթացակարգերի, դասավանդման մեթոդների և մոտեցումների, համակարգի այլ տարրերի փոփոխություն, բարելավում: Միջոցառման իրականացման ակնկալվող արդյունք կարող էր լինել, օրինակ, դասավանդման նոր մեթոդների ներդրումը կամ վերապարաստման մասնակիցների ընտրության կարգի/սկզբունքների հստակեցումը, կամ վերապարաստման դասընթացների շնորհիվ ձեռք բերված գիտելիքների գնահատման առավել կատարելագործված եղանակը, և այլն: Մինչդեռ այս միջոցառման ակնկալվող արդյունքն ընդամենը ենթադրում է վերապարաստված ծառայողների թվային ցուցանիշ, ինչի միջոցով հնարավոր չէ եզրակացություն անել համակարգի կատարելագործման մասին: Ավելին, 300 հարկային ծառայողներ հնարավոր է վերապարաստել նաև առկա, չկատարելագործված համակարգի միջոցով:
4. Անհրաժեշտ ֆինանսական և այլ միջոցների լիարժեք ապահովվածության բացակայության պարագայում ներառված ոլորտները չափազանց լայն են և ոչ թիրախավորված:
5. Առանձին դեպքերում առկա է պարասխանատուների «սխալ» ընտրության խնդիր, ինքնուրույն կառավարում իրականացնող մարմինների պարասխանատուության չափափոման բաց: Օրինակ՝ Արդարադատության նախարարությունը նշել է, որ հակակառուպցիոն ռազմավարության «Զաղաքական կոռուպցիա» ոլորտի 56, 57, 58 կետերով նախատեսված միջոցառումների «Ազգային ժողովի հետ կապված օրենքների նախագծերը պետք է մշակվեն Ազգային ժողովի կողմից»:
6. Հակակոռուպցիոն ծրագրով նախատեսված միջոցառումները թերի են պլանավորված, դրանք անհրաժեշտ չափով համալիր և ամբողջական չեն: Հակակոռուպցիոն ռազմավարության մեջ նշված չորս ոլորտների օրինակով կգնահատենք, թե «Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թթ. միջոցառումների

ծրագրում որքանով են հաջող պլանավորված եղել միջոցառումները, ակնկալվող արդյունքներն ու մոնիթորինգային ցուցիչները:

Միջոցառումների ծրագրի գնահատումը կիրականացվի հետևյալ հարցադրումների միջոցով.

- Արդյո՞ք լիարժեք և բավարար է ռազմավարության փվյալ դրույթից բխող միջոցառումների ցանկը այդ դրույթի իրագործման համար:
- Արդյո՞ք լիարժեք և բավարար են փվյալ միջոցառման ակնկալվող արդյունքները՝ այդ միջոցառման իրականացումը հաջողված համարելու համար:
- Արդյո՞ք մոնիթորինգային ցուցիչները լիարժեքորեն են արտացոլում փվյալ միջոցառման/արդյունքների հաջող իրականացումը:
- Ինչպիսի՞ բացեր են առկա միջոցառումների և արդյունքների ձևակերպումներում:

ա) «Քրեակադարողական ծառայություն»

«Քրեակադարողական ծառայություն» ոլորտը պարունակում է ռազմավարության 3 դրույթներ: 3 դրույթները ներառում են կոռուպցիայի դեմ պայքարի հետևյալ եղանակները.

- քրեակադարողական ծառայության գործառնությունների նկատմամբ հասարակական և գերաբնույթական վերահսկողություն.
- որակյալ կադրերի ներգրավում.
- ծառայողի և պարիստ կողմ անձանց սերտացման բացառում:

Այս եղանակների բովանդակությունից կարելի է ենթադրել, որ ծրագիրը մշակողները քրեակադարողական ծառայության բնագավառում կոռուպցիոն դրսևտրումներին նպաստող գործոններ են համարել.

- ոչ արդյունավետ վերահսկողությունը.
- որակյալ կադրերի պակասը.
- ծառայողի և պարիստ կողմ անձանց սերտացումը:

Ակնհայտ է, որ սա կոռուպցիոն դրսևտրումներին նպաստող գործոնների ոչ լրիվ ցանկն է: Մասնավորապես, քրեակադարողական ծառայության բնագավառում կոռուպցիային նպաստում են նաև.

1. պարիստ կողմ անձանց՝ իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակը և իրավունքների պաշտպանության ոչ բավարար կարողությունները: Մրանց կարող ենք հավելել նաև այս անձանց խոցելիության այլ դրսևտրումները կրթական ցածր մակարդակ, առողջական խնդիրների առկայություն, թմրանյութերից ունեցած կախվածություն և այլն:
2. Քրեակադարողական ծառայողների կողմից նպատակաուղղված չարաշահումները, որոնք միայն սերտացման կամ թույլ վերահսկողության հետևանք չեն: Չարաշահումների համար, իրենց հերթին, հիմք են հանդիսանում օրենսդրական բացերը և պաշտոնավար անձանց հայեցողության լայն շրջանակը: Հայեցողության հիմնախնդրի մեկ այլ դրսևտրում է պարիստ կողմ անձանց չափազանց մեծ կախվածությունը քրեակադարողական ծառայողներից: Այս հանգամանքը ստիպում է դատապարտյալներին լոյալություն դրսևտրել փարբեր կոռուպցիոն չարաշահումների նկատմամբ:
3. Քրեակադարողական հիմնարկների ներքին ենթամշակույթը (արժեքներ, նորմեր), որտեղ թե՛ ծառայողների, թե՛ պարիստ կողմ անձանց կողմից թույլատրելի և անգամ ընդունելի են համարվում կոռուպցիոն որոշ դրսևտրումները:
4. Քրեակադարողական հիմնարկների՝ որպես փակ համակարգի բնույթը, ինչը տեղեկատվության ստացման լուրջ խոչընդոտ է:
5. Քրեակադարողական հիմնարկների՝ դեռևս խորհրդային ժամանակշրջանից գործող կանոնակարգերը, որոնք կորցրել են իրենց արդիականությունը: Ոչ ակտուալ կանոնների շրջանցումը կարող է ընդունելի համարվել ինչպես ծառայողների, այնպես էլ պարիստ կողմ

անձանց կողմից: Այսինքն, որքան անհեթեթ, ժամանակավրեպ կամ անհարկի խիստ են գործող կանոնները, այնքան մեծ է դրանց խախտման հավանականությունը, հերևաբար՝ կոռուպցիոն ռիսկերը նույնպես:

Այսպիսով, վերոնշյալ գործոնների անգամ ոչ լրիվ ցանկը վկայում է քրեակադարողական ծառայության բնագավառում ռազմավարության դրույթների ոչ լիարժեքության մասին: Այդ դրույթները պետք է ներառեն, օրինակ.

- պարիժը կրող անձանց իրավունքների վերաբերյալ իրազեկման աշխատանքներ.
- քրեակադարողական ծառայողների հայեցողության շրջանակի հստակեցմանն ուղղված օրենսդրական բնույթի փոփոխություններ.
- քրեակադարողական հիմնարկների՝ կոռուպցիան խրախուսող ոչ ֆորմալ նորմերի փոփոխությանն ուղղված միջոցառումներ.
- քրեակադարողական հիմնարկների տեղեկատվական բացության նոր մեխանիզմների ներդրում.
- քրեակադարողական հիմնարկների ոչ արդիական կանոնակարգերի վերանայում:

Ռազմավարության 40-րդ դրույթի (կապարելագործել քրեակադարողական ծառայության գործառույթների իրականացման նկատմամբ հասարակական և գերատեսչական վերահսկողության մեխանիզմները) իրականացման համար նախատեսված են 3 միջոցառումներ:

Չնայած ռազմավարության դրույթով նախատեսված է նաև հասարակական վերահսկողության մեխանիզմների կադրերագործում բոլոր 3 միջոցառումներում էլ չկա հասարակական փարրի զարգացմանը միտված որևէ գործողություն: Միայն 40.2 միջոցառման մեջ խոսվում է այն մասին, որ հասարակական դիտորդների խմբի հաշվետվությունները և դրանց վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարի մեկնաբանությունները պետք է հրատարակվեն ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում: Ակնհայտ է, որ կայքում հրատարակվելիք հաշվետվությունները խիստ անբավարար են հասարակական վերահսկողության մեխանիզմների կադրերագործման նպատակին ծառայելու համար:

Մինչդեռ անհրաժեշտ էր պլանավորել այլ միջոցառումներ ևս, որոնք կնպաստեին.

- հասարակական վերահսկողության նոր մեխանիզմների հայտնաբերմանը և ներդրմանը (օրինակ՝ նոր սկզբունքներով ստեղծվող խմբերի միջոցով).
- հասարակական վերահսկողություն իրականացնող առկա խմբերի անդամների կարողությունների զարգացմանը.
- հասարակական վերահսկողություն իրականացնող առկա խմբերում նոր անդամների և նոր կառույցների ներգրավմանը.
- հասարակական վերահսկողություն իրականացնող առկա խմբերի իրավասությունների ընդլայնմանը.
- հասարակական վերահսկողություն իրականացնող առկա խմբերի զեկույցների/առաջարկների՝ նախարարության կողմից պարտադիր քննարկման առարկա դառնալուն և այլն:

Թիվ 40.3 միջոցառման մեջ նշվում է ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողության վարչության գործառույթները հստակեցնելու և գերատեսչական վերահսկողության ընթացակարգեր սահմանելու մասին: Ծիշար է, այս 2 գործողությունները պահանջված են, սակայն ցանկալի կլինեն նախանշել փոփոխության ուղղությունը, նպատակակետը: Օրինակ՝ եթե նախարարության վերահսկողության վարչության գործառույթները ծրագիրը մշակողների կողմից համարվում են սահմանափակ, ապա հարկավոր էր ցույց տալ նաև փոփոխության բնույթը, օրինակ՝ գործառույթների ընդլայնումը: Այլապես «հստակեցնել» հասկացությունը վկայում է միայն այն մասին, որ ներկայիս գործառույթների միակ թերությունը հստակ չլինելն է:

Ռազմավարության 40-րդ դրույթի մոնիտորինգային առաջին ցուցիչում օգտագործված է «մասնակցային մոնիտորինգի արդյունքների հրատարակումների ընդհանուր թվաքանակ» հասկացությունը, որի սահմանումը փրված չէ: Մոնիտորինգային 2-րդ ցուցիչում օգտագործված է

«մասնակցային մոնիթորինգի հաճախականություն» հասկացությունը, որի բովանդակությունը դարձյալ բացահայտված չէ:

Բացի այդ, 2 ցուցիչներում էլ օգտագործվում են միայն քանակական փոփոխություններ՝

- Արդարադատության նախարարության վերահսկողության վարչության կողմից իրականացրած գերաբեռնական սպորտումների թիվը.
- Քրեակարարողական ծառայության հասարակական դիտորդների խմբի հրապարակված հաշվետվությունների ընդհանուր թվաքանակը:

Սակայն ակնհայտ է, որ գերաբեռնական սպորտումների և հրապարակված հաշվետվությունների թվերն ամեննին վերահսկողության մեխանիզմների կատարելագործման մասին չեն վկայում: Ավելին, այս ցուցիչները կարող են բերել մի վիճակի, երբ սպորտումների հաճախականությունն արհեստականորեն կաճի, ինչը, սակայն, սպորտման որակի հետ կարող է ուղղակի առնչություն չունենալ:

Ռազմավարության 42-րդ դրույթի (խրախուսել որակյալ կադրերի ներգրավվածությունը քրեակարարողական ծառայությունում) իրականացման համար նախատեսված է 2 միջոցառում: Սակայն այս միջոցառումները կրկին անբավարար են դրված նպատակին հասնելու համար: Եթե որակյալ կադրերի ներգրավում ասելով հասկանում ենք նաև (կամ առաջին հերթին) նոր կադրերի ներգրավում, ապա 2 միջոցառումներն էլ խիստ անբավարար են նոր մասնագետների ներգրավման համար: Մասնավորապես, որակյալ կադրերը որևէ համակարգում ներգրավելու համար հաշվի են առնում ոչ միայն և ոչ այնքան «որակավորման օբյեկտիվ չափանիշերը», «պաշտոնի անձնագրերի» և «վերապատրաստման ծրագրերի» առկայությունը, որքան.

- գրավիչ աշխատանքային պայմաններն ու միջավայր.
- աշխատավարձի մրցունակությունը.
- ինքնադաստիարակման և մասնագիտական ինքնիրացման հնարավորությունները.
- աշխատանքային առաջնությունների հետաևակարները.
- առաջարկվող պաշտոնի սոցիալական կարգավիճակն ու հեղինակությունը և այլն:

Մինչդեռ վերոնշյալ գործոնները արդարացիված չեն առաջարկվող միջոցառումներում:

Այս միջոցառման առաջին փուլում 2010թ. արդյունքն աննշան փոփոխությամբ կրկնվում է նաև 2011 և 2012 թվականներում: Եթե ծրագրերի վերանայումը դիտարկվում է որպես շարունակական գործընթաց, որը պետք է 3 փուլի փուլի, ապա հարկավոր էր նշել, թե յուրաքանչյուր փուլի ծրագրերի որ մասը/փուլը պետք է կատարված լիներ: Մա հարկավոր էր անել արդյունքի չափելիությունն ապահովելու համար:

Հիմնավորված չէ միջոցառման մոնիթորինգային ցուցիչներից 2-րդը, որը ենթադրում է «քրեակարարողական ծառայողների միջին աշխատավարձի աճ...»: Եթե 2 միջոցառումներից (42.2 և 42.3) և ոչ մեկում նախատեսված չէ քրեակարարողական ծառայողների աշխատավարձի բարձրացում, պարզ չէ, թե այս ցուցիչն ինչու է ընդունվել:

Ռազմավարության 43-րդ դրույթի (բացառել քրեակարարողական ծառայություն իրականացնելիս քրեակարարողական ծառայողի և պարիսպ կրող անձանց սերտացման հնարավորությունները) իրականացման համար նախատեսված է ընդամենը մեկ միջոցառում (սահմանել քրեակարարողական ծառայողին այլ պաշտոնի փոխադրելու իմպերատիվ դեպքեր): Անգամ հպանցիկ անդրադարձից պարզ է դառնում, որ այս մեկ միջոցառումը չի կարող նպաստել «ծառայողի և պարիսպ կրող անձի սերտացման հնարավորությունների» բացառմանը:

Նախ, միմյանց չեն համապատասխանում պլանավորված միջոցառումն ու արդյունքը: Միջոցառումն ավելի շուրջ սանկցիաների համակարգի մշակում է ենթադրում: «Այլ պաշտոնի փոխադրելու իմպերատիվ դեպքեր»-ի սահմանումը ենթադրում է, որ այլ պաշտոնի փոխադրելը որոշակի իրավիճակների, դեպքերի հետևանք պետք է լինի: Մինչդեռ միջոցառման արդյունքով նախատեսված «ռուտացիայի ընթացակարգը» շար ավելի ընդգրկում և հիմնավոր համակարգ է ենթադրում: Ավելին, որ միջոցառումն էլ նախատեսված «իմպերատիվ դեպքերի սահմանումը» խիստ անբավարար է ռուտացիայի ընթացակարգ ստանալու համար: Ընթացակարգի մշակման

համար, բացի դեպքերից, պետք է մշակել նաև սկզբունքներ, մեխանիզմներ և այլն: Այսպիսով, միջոցառումն ավելի նեղ է ձևակերպված, քան նախատեսված արդյունքը:

Ըստ միջոցառման և արդյունքի բովանդակության՝ կարելի է ենթադրել, որ ծրագիրը մշակողները սերտաճման բացառման գլխավոր եղանակ են դիտում ծառայողների ռուտացիան: Սակայն այս միջոցը արձագանքում է սերտաճման միայն մեկ գործոնին, այն է՝ քրեակարարողական ծառայողի և պարիժ կրող անձանց կայուն շփումը երկարաբան ժամանակահատվածում: Սերտաճմանը նպաստող մյուս գործոններն ընդհանրապես թիրախավորված չեն: Դրանից են, օրինակ.

- պարիժ կրող անձանց կողմից որոշակի ոչ ֆորմալ ծառայությունների մատուցումը քրեակարարողական հիմնարկի ղեկավարությանը, ինչի արդյունքում վերջիններս էլ փոխադարձ ծառայությունների մատուցման պարտավորություն են ձեռք բերում: Այդպիսին կարող է լինել, օրինակ, քրեական հեղինակությունների կողմից ազատագրված անձանց շրջանում կոնֆլիկտների կառավարումը, ներքին կարգուկանոնի պահպանմանն ուղղված ջանքերը, ազատագրվածների որոշակի կենցաղային խնդիրների լուծումը, և այլն:
- քրեակարարողական ծառայողի և պարիժ կրող անձանց սերտաճումը խրախուսող ոչ ֆորմալ նորմերը: Օրինակ, երբ քրեակարարողական ծառայողը ինքն է հանդիսանում քրեական մշակույթի որոշակի տարրերի կրողը կամ համակիրը:

բ) «Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն»

«Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն» բնագավառում ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող միջոցառումները գրեթե լիարժեք արտացոլում են գրել ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրում:

Սակայն ռազմավարության մեջ նշվում է մի հիմնախնդրի մասին, որի հաղթահարմանն ուղղված գործողություններ չեն նախատեսվում. «... հայեցողական լիազորությունների իրականացման հետ կապված բողոքարկումը, հարկապես հարկադիր կատարողի կողմից հարկադիր կատարման կարգի խախտում թույլ տված չլինելու դեպքում, միշտ չէ, որ հանդիսանում է պաշտպանության արդյունավետ միջոց և հարկադիր կատարողի կողմից իր լիազորությունները պարզաճ իրականացնելու համար նախականիչ նշանակություն ունեցող գործոն: Դրա պարճառներից մեկը հարկադիր կատարման սկզբունքների օրենսդրական ամրագրման բացակայությունն է»: Այնուհետև նշվում է, որ «հարկադիր կատարողի կողմից անձանց շահերը հաշվի առնելու վերաբերյալ նախատեսված եզակի դրույթ է թերևս «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածում առկա այն դրույթը, ըստ որի հարկադիր կատարողը պարտավոր է իրեն վերապահված իրավունքներն օգտագործել օրենքին համապատասխան և իր գործունեության մեջ թույլ չտալ քաղաքացիների ու կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի որևէ խախտում»:

Այսպիսով, թեև վերլուծությունն ի հայտ է բերում օրենսդրական փոփոխությունների կատարման անհրաժեշտություն, սակայն միջոցառումների ծրագրում այս ուղղությամբ որևէ գործողություն նախատեսված չէ: Ըստ էության, հարկադիր կատարողին վերապահված հայեցողության լայն հնարավորությունները կոռուպցիոն ռիսկերի դրսևորման էական նախադրյալներ են ստեղծում: Ավելին, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության վերաբերյալ հանրային դժգոհությունն ու համակարգում կոռուպցիոն ռիսկերի առկայության վերաբերյալ կասկածը գլխավորապես լիազորությունների հայեցողականության փաստով են պայմանավորված: Այդ մասին է վկայում նաև դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության գործողությունների դատական վիճարկման համար ներկայացված հայցերի ծավալն ու բովանդակությունը: Մինչդեռ այս առանցքային հիմնախնդիրն արտացոլում չի գրել միջոցառումների ծրագրում:

Միջոցառումների ծրագրի 47-րդ դրույթը նախատեսում է. «բարձրացնել հարկադիր կարարողների կողմից պարտապանի գույքը հայտնաբերելու կարողությունը», իսկ դրույթին համապատասխան միակ միջոցառումը «բարելավվել պարտապանի գույքի հայտնաբերման հարցում հարկադիր կարարման ծառայության կարողությունները»: Ինչպես տեսնում ենք, դրույթի և միջոցառման ձևակերպումների միջև էական փարբերություն առկա չէ, դրանց իմաստը և կոնկրետության մակարդակը գրեթե նույնն են: Միջոցառումն առավել լայն, ընդգրկուն գործողություններ է ենթադրում, քան դրույթը, մինչդեռ պետք է հակառակը լիներ: Այսպես, եթե դրույթով նախատեսված է «հարկադիր կարարողների» կարողությունների բարձրացումը, ապա միջոցառմամբ՝ «հարկադիր կարարման ծառայության» կարողությունների բարելավումը: Ակնհայտ է, որ ծառայության կարողությունների զարգացումը ավելի համալիր ու փարաբնույթ գործողություններ է ենթադրում, քան մասնագետների հարկադիր կարարողների կարողությունների զարգացումը:

գ) «Ոստիկանական ծառայություն»

«Ոստիկանական ծառայություն» բնագավառում << հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող միջոցառումները գրեթե լիարժեք արտացոլում են գրել Ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրում: Մակայն միջոցառումների ծրագրում բացակայում է ռազմավարության մեջ նախատեսված «ապահովել ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի, գծանշումների պարշաճ վիճակը» գործողությունը:

Բացի այդ, միջոցառումների ծրագրում ռազմավարության 50-րդ դրույթից միանգամից անցում է կարարվում 52-րդ դրույթին, բացակայում է 51-րդ դրույթը:

Ռազմավարության 50-րդ դրույթով նախատեսված է, որ պետք է «բարձրացնել ճանապարհային ոստիկանության գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը»: Այս դրույթի իրագործման համար նախատեսված 2 միջոցառումներից մեկը վերաբերում է արտաբյուջետային ֆոնդի թափանցիկության, մյուսը՝ վիճակագրության մարչելիության ապահովմանը: Թեև 2 միջոցառումներն էլ պահանջված են և կարևոր, սակայն գործունեության թափանցիկության այլ միջոցառումներ ևս հնարավոր էր նախատեսել, օրինակ՝ պարբերաբար տեղեկարվություն հրապարակել լիազորությունները չարաշահելու կամ դրանց կարարման ընթացքում թերանալու հետևանքով կիրառված կարգապահական տույժերի, պաշտոնանկությունների վերաբերյալ:

Ռազմավարության 52-րդ դրույթի (բարձրացնել բնակչության պետական ռեգիստրի գործունեության արդյունավետությունը) իրագործման համար նախատեսված 52.1 միջոցառումը (Կարարելագործել բնակչության պետական ռեգիստրի համակարգը) բավականին անորոշ է ձևակերպված: Պարզ չէ, թե համակարգի կարարելագործումը կոնկրետ ի՞նչ գործողություններ է ենթադրում:

Ռազմավարության 53-րդ դրույթի (ներդնել անհատական փվյալների անձեռնմխելիությունը ապահովող համապատասխան իրավական նորմեր) իրագործման համար նախատեսված միակ միջոցառումը որևէ գործողություն չի նախատեսում անհատական փվյալների ապօրինի հրապարակման, դրանց վաճաքի (օրինակ՝ կոմերցիոն նպատակներով օգտագործելու) դեպքերի համար: Տվյալների անձեռնմխելիությունը առավելապես դրանց պաշտպանվածությանն է վերաբերում և կոռուպցիոն ռիսկեր են առկա հենց փվյալների վաճառքի կամ ապօրինի օգտագործման դեպքերում: Մինչդեռ վերոնշյալ միջոցառումն ավելի շար ուղղված է փվյալների բազայի համարմանն ու փվյալների որակի, հուսալիության բարելավմանը: Անձեռնմխելիության ապահովման ուղղակի գործողություններ նախատեսված չեն:

Ռազմավարության 54-րդ դրույթի (ապահովել ոստիկանության գործունեության օրինականությունը, բարձրացնել պարասխանափվյալությունը) 2-րդ փարրը

«պարասխանարվության բարձրացումը» որևէ հստակ իմաստ չի արտահայտում: Հասկանալի չէ, թե ում պարասխանարվությանն է այն վերաբերում՝ ոստիկանության, թե, օրինակ, պոլիտեխնիկ իրավախախտների: Պարզ չէ նաև «բարձրացնել» բառի իմաստը: Պարասխանարվությանը թերևս վերաբերելի կլիներ «խստացում» հասկացության կիրառումը:

Ակնկալվող արդյունքներում պարասխանարվության առնչությամբ նշված է՝ «Անհրավաչափ վարչական ակտ կայացրած ոստիկանության ծառայողների պարասխանարվության անխուսափելիության երաշխավորում»: Սակայն պարզ չէ, թե ինչ միջոցներով է երաշխավորվելու պարասխանարվության անխուսափելիությունը: Իրական երաշխավորման համար հարկավոր էր նախատեսել, օրինակ, գործող կանոնակարգերի փոփոխություն նախատեսել:

Միաժամանակ, հասարակական ուշադրության կենտրոնում գրկնվող ոստիկանության կողմից ոչ իրավաչափ ուժ կիրառելու և անգործություն դրսևորելու հիմնախնդիրները արտացոլված չեն միջոցառումներում: Մյուս կողմից, որոշ «արտոնյալ» խավերի նկատմամբ ոստիկանության հովանավորչությունը ևս կոռուպցիայի ցայտուն դրսևորումներից է: Մինչդեռ օրակարգային այս խնդիրների հաղթահարման համար միջոցառումներ նախատեսված չեն:

Ռազմավարության 55-րդ դրույթի (ապահովել ոստիկանության մարմինների աշխատանքի և քաղաքացիների սպասարկման պարշաճ որակը) 55.1 միջոցառման (կրճատել ոստիկանության միջանկյալ օղակների և ծառայող-քաղաքացի շփման բարդությունները) հիմնական միջոց է դիտարկվել մատուցվող ծառայությունների համար դիմումների ձևերը ոստիկանության պաշտոնական կայքում փոխարինելը, դրանց ներկայացման ու ընթացք փալտ մատչելի համակարգի ներդրումը: Սակայն ակնհայտ է, որ ծառայող-քաղաքացի շփման բարդությունները միայն դիմումների ներկայացման խնդիրներով չեն պայմանավորված: Շփման բարդություններից է, օրինակ, ոստիկանական համակարգի նկատմամբ հասարակական վստահության ցածր մակարդակը, մի շարք ծառայողների շփման մշակույթի ցածր մակարդակն ու հաղորդակցության հմտությունների բացակայությունը: Հեղափոխություն, հարկավոր էր գործողություններ նախատեսել նաև այս խնդիրների առնչությամբ:

Ռազմավարության 55-րդ դրույթի լիարժեք իրագործման համար հարկավոր էր նաև միջոցառումներ նախատեսել քաղաքացիների սպասարկման համար անհրաժեշտ հմտությունների զարգացման ուղղությամբ:

Ոստիկանության բնագավառում յուրջ կոռուպցիոն ռիսկեր են առկա նաև քրեական գործերի հարուցման, գործերի հարուցումը մեղքելու որոշումների կայացման գործընթացում: Սակայն ռազմավարության դրույթների շարքում բացակայում են այս գործընթացի վերահսկելիության ու թափանցիկության բարձրացմանն ուղղված դրույթները:

դ) «Դատական համակարգ»

«Դատական համակարգ» բնագավառում ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող միջոցառումները լիարժեք արտացոլում են գրել ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրում:

Հակակոռուպցիոն ռազմավարության «դատական համակարգ» ենթազխում նախատեսված է «դատավարական ֆորմալ ընթացակարգերի պարզեցումը և դատարանների բեռնաթափումը»: Սակայն թե՛ ռազմավարության ծրագրում, թե՛ միջոցառումների ծրագրում այս միջոցի գործադրման միակ եղանակ է նախատեսվել վեճերի լուծման այլընտրանքային միջոցների կիրառումը: Իր հերթին, այս դրույթի իրականացման համար պլանավորվել է միայն «հստակեցնել ընտանեկան, աշխատանքային վեճերով արբիտրաժի կիրառման օրենսդրական շրջանակները» միջոցառումը: Այսպիսով, եռաստիճան պլանավորման միջոցով «դատավարական ֆորմալ ընթացակարգերի պարզեցումն ու դատարանների բեռնաթափումը» հանգեցվել է միայն «օրենսդրական շրջանակների հստակեցմանը»:

Մինչդեռ ակնհայտ է, որ դատարանների բեռնաթափումը հնարավոր է և կարելի է իրականացնել օրենսդրական հստակեցումից զատ, այլ միջոցներով ևս: Օրինակ, դատարանների

բեռնաթափման ներքո կարելի է և պետք է հասկանալ ոչ միայն լիարժեք դատական քննության ենթակա գործերի թվի նվազեցումը, այլև գործերի քննության ողջամիտ ժամկետների ապահովումը: Սա թույլ կտա բեռնաթափել դատարանները գործերի առավել արագ քննության հաշվին՝ առանց կրճատելու գործերի թիվը:

Եթե ելնենք այն վարկածից, որ դատարաններում գործերի կուտակման համար առկա են նաև սուբյեկտիվ բնույթի պարճառներ (դատավորների կողմից անհարկի ձգձգումները կամ ողջամիտ ժամկետներում գործն ավարտելու թույլ շարժառիթը), ապա դատավորների խրախուսման և սանկցիաների կիրառման միջոցով նույնպես հնարավոր է հասնել դատարանի մասնակի բեռնաթափման: Ճիշտ է, գործերի քանակն անփոփոխ կմնա երկարաժամկետ հեռանկարում (օրինակ՝ մեկ փարվա կիրովածքով), սակայն դատարանները կբեռնաթափվեն կարճաժամկետ հարվածում (ամիս, եռամսյակ):

Այսպիսով, բերված օրինակները ցույց են տալիս, որ պլանավորված օրենսդրական փոփոխություններն արդյունքի ստացման միակ եղանակը չեն:

Թիվ 37.3 միջոցառման (խստացնել արդարադատության իրականացմանը խոչընդոտելու նպատակով դատարանի գործունեության ցանկացած ձևով միջամտելու համար քրեական պարասխանաբարությունը) ակնկալվող արդյունքների շարքում նշված է՝ «դատական իշխանության նկատմամբ հասարակական վստահության գնահատական»: Պարզ չէ, թե այս արդյունքն ինչ կապ ունի առաջարկվող միջոցառման հետ:

Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրից դուրս են մնացել դատական համակարգում կոռուպցիոն ռիսկերի հետ առնչվող փարբեր հիմնախնդիրներ: Դրանք են, օրինակ՝

- դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու համար որակավորման ստուգման կարգի հնարավոր կոռուպցիոն ռիսկերը,
- դատավորների գործունեության գնահատման և առաջխաղացման օբյեկտիվ չափանիշերի և ընթացակարգերի բացակայությունը,
- դատավորին կարգապահական պարասխանաբարության ենթարկելու թափանցիկ և կանխարեսելի ընթացակարգերի բացակայությունը,
- դատական համակարգի գործադիր իշխանությունից լիարժեք անկախության ապահովման մեխանիզմների բացակայությունը,
- դատական համակարգի ներսում դատավորի անկախության ապահովման մեխանիզմների բացակայությունը,
- դատավորների միջև գործերի օբյեկտիվ (պարահական) բաշխման համակարգի բացակայությունը,
- դատական իշխանության կողմից իր գործունեության վերաբերյալ հաշվետվությունների հրապարակման համակարգի բացակայությունը:

Այս խնդիրների առնվազն մի մասը հարկավոր էր ներառել ռազմավարության մեջ և համապարասխանաբար պլանավորել հակակոռուպցիոն միջոցառումներ:

3.2 Հակակոռուպցիոն արդյունավետ մարմին

3.2.1 Կոռուպցիայի դեմ պայքարի մարմինները և որակն անդամակազմող չափանիշերը

Կոռուպցիայի դեմ պայքարի մարմինները դասակարգվում են երեք խմբի՝

ա) Բազմաֆունկցիոնալ մոդել

Այս մոդելը ներկայացնում է միասնական մարմնի փեսության ամենավառ օրինակը՝ հիմնված երեք հենասյան վրա՝ քննություն, կանխարգելում և հասարակության հետ աշխատանք ու կրթություն: Շարք դեպքերում, հեղափոխումը մնում է որպես առանձին գործառույթ՝ համակարգում զսպումներն ու հավասարակշռությունն ապահովելու համար: Մոդելը սովորաբար ներկայացվում է Հոնկոնգի և Մինգապուրի օրինակներով:

բ) Իրավապահ գործունեության մոդել

Իրավապահ գործունեության մոդելն ունի մասնագիտացման փարբեր ձևեր և կարող է ներդրել հեղափոխական, քննչական մարմիններում և դադարազուրկում: Այս մոդելի միջոցով կոռուպցիոն դրսևորումների բացահայտումը, քննությունը և հեղափոխումը կարող է համախմբվել նաև մեկ միասնական մարմնում: Երբեմն իրավապահ գործունեության մոդելը պարունակում է նաև կանխարգելման, համակարգման ու հեղափոխման գործառույթների փարբեր:

գ) Կանխարգելման մարմնի մոդել

Կանխարգելման մարմինն ամենափարածված մոդելն է գոյություն ունեցողներից: Միևնույն ժամանակ, այն կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի: Դրանք են՝

- Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդարկական խորհուրդներ: Այս խորհուրդները սովորաբար սրեղծվում են հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացմանն ուղղված ջանքերը համապարկակ ձևով ուղղորդելու, մասնավորապես՝ հակակոռուպցիոն ազգային ռազմավարության մշակման, իրականացման և մոնիթորինգի գործընթացը վերահսկելու նպարակով: Մովորաբար դրանք կոլեգիալ մարմիններ են, որոնք համախմբում են փարբեր գերարեսուրսությունների և նախարարությունների՝ հաճախ՝ բարձր մակարդակով ներկայացուցիչներին և երբեմն՝ նաև քաղաքացիական հասարակությանը:

- Կոռուպցիայի կանխարգելման կենտրոնական մարմիններն ուղղակիորեն սրեղծվել են կոռուպցիայի կանխարգելման նպարակով, սակայն օժրված են ավելի լայն իրավասությամբ, քան կոռուպցիայի դեմ պայքարի վերոնշյալ խորհուրդները: Հանձնաժողովներին կարող է վերապահվել հակակոռուպցիոն ռազմավարությունների համակարգումը, սակայն դրանք ունեն նաև մի շարք այլ գործառույթներ, օրինակ՝ կոռուպցիոն ռիսկի գնահարում, կոռուպցիայի կանխարգելման, հասարակության իրազեկման և կրթության վերաբերյալ ուղեցույցների/մեթոդաբանությունների մշակում, շահերի բախման, եկամտի հայտարարագրման, քաղաքական կուսակցության ֆինանսավորման կամ լոբինգի նկարմամբ հսկողության իրականացում, օրենսդրության վերանայում հակակոռուպցիոն փեսանկյունից:

- Հանրային հասարություններ, որոնց պարարկանությունների մի մասն է կազմում կոռուպցիայի կանխարգելման գործընթացին նպարտելը և որոնք ուղղակիորեն չեն համարվում կամ սրեղծված չեն որպես «կոռուպցիայի դեմ պայքարի մարմիններ» (օրինակ՝ ներքին մասնագիտական եթիկայի հանձնաժողովներ, հանրային ծառայությունների հանձնաժողովներ և այլն):

Հակակոռուպցիոն մարմինների վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը թույլ է փախ դուրս բերել հակակոռուպցիոն մեխանիզմներին/մարմիններին ներկայացվող մի շարք պահանջներ, որոնք են՝ մասնագիտացվածությունը, անկախությունը և ինքնավարությունը, հաշվերովողականությունը և թափանցիկությունը, ռեսուրսներով ապահովվածությունը, հասարակական ներգրավվածությունն ու միջգերարեսուրսական համագործակցությունը, միջազգային համագործակցությունը և գնահարման համակարգի առկայությունը:

ա) Մասնագիտացումը.

Կոռուպցիայի դեմ պայքարը ենթադրում է փարբեր ոլորտներում, այդ թվում՝ իրավունքի, ֆինանսների, տնտեսագիտության, հաշվապահական հաշվառման, հասարակական գիտությունների և այլ ոլորտներում, հատուկ փորձի, գիտելիքների և հմտությունների առկայություն:

Միջազգային ստանդարտները չեն առանձնացնում կոռուպցիայի դեմ պայքարում մասնագիտացված հաստատության լավագույն մոդել: Ըստ էության, գործող կառույցներում համապարասխան թվով մասնագիտացված անձանց ներգրավումն արդեն իսկ բավարարում է միջազգային պայմանագրերով նախատեսված մասնագիտացվածության պահանջներին:

բ) Անկախությունը և ինքնավարությունը.

Հակակոռուպցիոն մարմինների համար պետք է ապահովվի արդյունավետ, առանց կողմնակի ազդեցության, սեփական հայեցողությամբ գործառույթներն իրականացնելու հնարավորություն՝ առանց նախնական խորհրդակցության կամ թույլտվության:

Միջազգային փաստաթղթերով պահանջվող ֆորմալ ու ֆինանսական անկախության պահանջին հավասարազոր կամ նույնիսկ առավել առանցքային նշանակություն ունի իրական քաղաքական կամքի առկայությունը՝ զուգորդված համարժեք ռեսուրսների, լիազորությունների ու անձնակազմի առկայությամբ: Հետևաբար, միջազգային ստանդարտներին համապարասխան՝ մասնագիտացված մարմինների առանձնահատկություններից մեկը ոչ թե լիարժեք անկախությունն է, այլ կառուցվածքային ու գործառույթային ինքնավարության համապարասխան մակարդակը՝ ապահովված ինստիտուցիոնալ ու իրավական մեխանիզմներով: Կոռուպցիայի դեմ պայքարի մարմնի անկախությունը որոշվում է մի քանի գործոններով.

• *Իրավական հիմքը*

Կոռուպցիայի դեմ պայքար իրականացնող մարմինը պետք է ունենա հստակ իրավական հիմք, որը կսահմանի նրա իրավասությունը, ինստիտուցիոնալ դիրքը, մարմնի ղեկավարի նշանակումը և պաշտոնից հեռացումը, ներքին կառուցվածքը, գործառույթները, լիազորությունները, բյուջեն, կադրային հարցերը, պարասխանավորությունը և այլն: Իրավական հիմքը պետք է, հնարավորության դեպքում, նախատեսվի օրենքով, այլ ոչ ենթաօրենսդրական ակտերով, կառավարության որոշումներով կամ նախագահի հրամանագրերով:

• *Ինստիտուցիոնալ տեղակայումը*

Առանձին մշտական ինստիտուցիոնալ կառույցը՝ գործակալությունը, ստորաբաժանումը կամ հանձնաժողովն ինքնին ավելի թափանցիկ և անկախ է, քան գործադիր իշխանության մարմնի (ներքին գործերի, արդարադատության, ֆինանսների նախարարություն և այլն) համակարգում ստեղծված վարչությունը կամ ստորաբաժանումը: Նմանապես, գործադիր իշխանությունից անկախ մարմնի ձևով կամ գոյություն ունցող մարմնի ներսում հակակոռուպցիոն միավորի կազմավորումը կարող է բավարար հիմքեր ստեղծել ինքնավարության համար:

• *Բարձրաստիճանի ղեկավարների նշանակումը*

Մարմնի ղեկավարի ընտրության գործընթացը պետք է լինի թափանցիկ: Ղեկավարի պաշտոնում նշանակման համար անհրաժեշտ պահանջների շարքին են դասվում պրոֆեսիոնալիզմը, հեղինակությունը, ակնառու ձեռքբերումները և աշխարհաքային փորձը: Ղեկավարների նշանակման համընդհանուր կիրառություն ունեցող գործընթացն իրենից ներկայացնում է պաշտոնի նշանակման համար որոշումների կայացման մի քանի փուլեր ներառող հատուկ ընթացակարգ. մեկ անձի կողմից նշանակումը չի համարվում լավագույն գործելակերպ: Է: Ավելին, հակակոռուպցիոն մարմնի ղեկավարի պաշտոնը կարող է համարվել մրցույթի արդյունքում: Պաշտոնի դադարեցման հետ կապված հարցերը ևս պետք է հանգամանալից կարգավորման ենթարկվեն:

• *Կադրերի ներգրավումը*

Հակակոռուպցիոն մարմնի անձնակազմի անդամների ընտրությունը և նշանակումը պետք է իրականացվի օբյեկտիվ, թափանցիկ և կարարողականի վրա հիմնված չափորոշիչներով: Անձնակազմի անդամները պետք է ապահովված լինեն անհրաժեշտ սոցիալ-տնտեսական երաշխիքներով:

• **Բյուջեպային և հարկային ինքնավարությունը**

Կարևորագույն նշանակություն ունի համարժեք ֆինանսավորումը: Պետք է երաշխավորվի հակակոռուպցիոն մարմնի կայուն ֆինանսավորումը և կանխվի գործադիր իշխանության չհիմնավորված հայեցողությունը ֆինանսավորման չափի որոշման հարցում:

զ) Հաշվետվողականությունը և թափանցիկությունը.

Կոռուպցիայի դեմ պայքարի հարցում մասնագիտացված մարմինների անկախությունը չպետք է լինի բացարձակ: Նման մարմիններից պահանջվում է իրենց գործունեության մասին կանոնավոր հաշվետվություններ ներկայացնել գործադիր և օրենսդիր մարմիններին, ապահովել իրենց գործունեության վերաբերյալ տեղեկությունների մատչելիություն: Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով քննություն իրականացնող մարմինները պետք է ենթարկվեն դատախազական և դատական հսկողության: Հաշվետվողականությունը պետք է ներառի նաև հանրության նկատմամբ հաշվետվողականությունը:

դ) Բավարար ռեսուրսները, վերապատրաստումը և լիազորությունները.

Միջազգային փաստաթղթերով նախատեսված կարևոր պահանջներից է կոռուպցիայի դեմ պայքարի մարմինները բավարար ռեսուրսներով և վերապատրաստման հնարավորությամբ ապահովելը:

Միջազգային կոնվենցիաներով նախատեսվում է պաշտպանություն տրամադրել կոռուպցիայի դեպքերի քննության և քրեական հետապնդման իրականացման հարցում պետական կառույցներին օժանդակող անձանց (վկայի պաշտպանությանն ուղղված դատավարական և ոչ դատավարական միջոցները) և խրախուսել կոռուպցիայի դեպքերի մասին հայտնելու արակտիկան և պետական կառույցների հետ համագործակցությունը (իրավախախտման մասին հայտնող անձանց պաշտպանությունից մինչև արդարադատությանն աջակցող անձանց սահմանափակ անձեռնմխելիության շնորհման և պարժի նվազեցման հնարավորությունները):

ե) Հանրության ներգրավումը և միջգերարեսչական համագործակցությունը.

Միջազգային տարբեր փաստաթղթերով սրեղծված մասնագիտացված մարմինների կարևոր բնորոշիչներից մեկը քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ համագործակցությունն է: Հակակոռուպցիոն մարմինը չի կարող գործել մեկուսացված և միայնակ իրականացնել կոռուպցիոն երևույթները ճնշելու և կանխարգելելու բոլոր աշխատանքները: Ուստի, միջազգային սրանդարտներով կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների բնորոշիչներից են միջգերարեսչական սերտ համագործակցությունը և տեղեկատվության փոխանակումը:

Այս պահանջը տարբեր երկրներում ապահովվում է կամ համակարգման բազմաբնույթ հարուկ հանձնաժողովների սրեղծման, համագործակցության և տեղեկատվության փոխանակման մասին հարուկ իրավական դրույթների, կամ համապատասխան ինստիտուտների միջև համագործակցության և տեղեկատվության փոխանակման հարուկ պայմանագրերի և հուշագրերի կնքման միջոցով:

զ) Միջազգային համագործակցությունը և ցանցերի սրեղծումը.

Կոռուպցիայի դեմ պայքարի գործում հաջողությունը մեծապես պայմանավորված է համագործակցությունից: Կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների միջև ցանցերի սրեղծման օգտակար հարթակներ են լավագույն փորձի փոխանակման համար:

է) Գնահատումը.

Մեծ կարևորություն ունի գործունեության կարարողականի ներքին գնահատման մեխանիզմների ներդրումը: Գնահատումը պահանջում է համապատասխան կարողություններ ունեցող մասնագետների և ռեսուրսների առկայությունը, արդյունքները գնահատելու պարզաձև մեթոդաբանություն, չափանիշեր և գործիքներ:

3.2.2 Կոռուպցիայի դեմ պայքարի գործող մեխանիզմի համապատասխանությունը միջազգային չափանիշերին

Հայաստանի Հանրապետությունում ներդրված կոռուպցիայի դեմ պայքարի հարուկ ինստիտուցիոնալ համակարգի գործունեությունը արդյունավետ չէ: Մասնավորապես, պահանջված չէ հակակոռուպցիոն մարմնի մասնագիտացվածության պահանջը: Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը ձևավորվում է պետական հաստատությունների ղեկավարներից, ովքեր, անկախ իրենց բնագավառներում արհեստավարժության մակարդակից, չեն ապահովում կոռուպցիայի դեմ պայքարում պահանջվող բոլոր մասնագիտությունների ներկայացվածությունը: Մյուս կողմից, մշտապես գործող առանձին կառուցվածքային միավորներ գոյություն չունեն և բուն հակակոռուպցիոն միջոցառումներն իրականացվում են պարասխանաբար մարմինների կողմից:

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի հանձնաժողովի բնականոն գործունեությունն ապահովող մշտական հիմունքներով գործող աշխարանքային խումբ ևս գոյություն չունի: Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգի հանձնաժողովը, լինելով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների լայն մասնակցությամբ գործող, սակայն չլինելով վերլուծական, գիտական ներուժի համախմբում ապահովող ինստիտուտ, իր կազմակերպման և ձևավորման մեխանիզմից ելնելով, ունակ չէ ապահովել հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետ մոնիթորինգ:

Ապահովված չէ նաև ձևավորված մարմնի գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը: Հասարակության ներգրավվածության առումով կան սահմանափակումներ, բավարար հիմքեր առկա չեն լիարժեք մասնակցային գործընթացի իրականացման համար:

Խնդիրներ կան նաև միջգերատեսչական համագործակցության առումով: Դեռևս ձևավորված չէ կայուն համագործակցություն գերատեսչությունների միջև, պարասխանաբարների միջև ծրագրի միջոցառումների բաշխումը հաճախ չհամաձայնեցված գործընթացի արդյունք է:

Ամբողջությամբ կայացած չէ գնահատման համակարգը: Բացի նախապես սահմանված ակնկալվող արդյունքներից և ցուցիչներից, չկան մոնիթորինգի շրջանակներում կիրառվող որակական գնահատման յուրջ մեթոդներ և սանդղակներ: Մյուս կողմից, իրականացվող գնահատումը վարչական է և սահմանափակվում է օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ կոնկրետ նախագծերի ընդունման մասին որոշումների կայացմամբ: Արդյունքների իրականացումն ու ձեռքբերումները գնահատվում են միջոցառումների պարասխանաբար մարմինների կողմից՝ առանց վերագնահատման հնարավորության, որպիսի պարագայում առկա է արդյունքների ուժեղացման, խեղաթյուրման իրական վրանգ:

3.2.3 Կոռուպցիայի դեմ պայքարի մարմիններն ստեղծելու հիմնավորումները և մոդելի ընտրությունը

Հարկ է նշել, որ կոռուպցիայի դեմ պայքարի մասին գոյություն ունեցող հետազոտություններում փարբեր պարասխաններ են տրվում այն հարցին, թե արդյո՞ք նախընտրելի է ձևավորել կոռուպցիայի դեմ պայքարի մեկ միասնական մարմին, թե՞ ջանքերն ուղղել երկրում առկա, արդեն իսկ ամբողջական ենթակառուցվածքի մաս կազմող հաստատությունների ամրապնդմանը:

Կոռուպցիայի դեմ պայքարի մարմին ստեղծելու հիմնական հիմնավորումը մասնագիտացված հաստատության միջոցով կոռուպցիայի նվազեցմանը նպաստելն է: Կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված մարմին կարող է անհրաժեշտ լինել, երբ գործող ինստիտուցիոնալ դաշտում կառուցվածքային կամ գործառնական թերությունները թույլ չեն տալիս արդյունավետ կանխարգելիչ և զսպիչ քայլեր ձեռնարկել կոռուպցիայի դեմ:

Կոռուպցիայի դեմ պայքարի միասնական մարմին ստեղծելու հիմնավորումներն են այն

ակնկալիքները, որ այդ մարմինը՝ ա) չի կարող վարակվել կոռուպցիայով կամ քաղաքական միջամտությամբ, բ) ուղղահայաց ինքնագրման միջոցով կլուծի բազմաթիվ կառույցների գործունեության համակարգման խնդիրը, գ) կարող է կենտրոնացնել կոռուպցիայի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները և հեփախուզական տեղեկությունները և կարող է ղեկավարել կոռուպցիայի դեմ պայքարը:

Միաժամանակ, այս մոդելի պայմաններում կարող է վրանգ ստեղծվել, որ կոռուպցիայի դեմ պայքարի միասնական մարմինը կարող է՝ ա) ստեղծել անարդյունավետ բյուրոկրատիայի մեկ այլ շերտ, բ) նվազեցնել հսկողություն իրականացնող առկա մարմինների ռեսուրսները, ուշադրությունը և պատասխանատվությունը, ինչպես նաև շեղել դրամաշնորհային ռեսուրսները բարեփոխումների գերակա ոլորտներից, գ) իրավական բախումներ առաջացնել և պայքարի մեջ մտնել ուրիշ մարմինների հետ, և դ) չարաշահվել որպես քաղաքական հակառակորդների դեմ գործիք:

Այսպես, կոռուպցիայի դեմ պայքարի մոդելի ընկերության հարցում պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները՝ ա) երկրում կոռուպցիայի գնահատված մակարդակը, բ) գործող հիմնարկների միասնականությունը, անաչառությունը, կոմպետենտությունը և հնարավորությունները, գ) կոռուպցիայի դեմ պայքարի նոր մարմինը, ի հակադրություն գործող հաստատությունների նեղ մասնագիտացված բնույթին, կարևոր է, որ գնահատի, թե արդյո՞ք կառավարության կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարությունը նպատակահարմար է իրականացնել կոռուպցիայի դեմ պայքարի նոր նպատակային մարմնի ստեղծման թե առկա մարմիններում մասնագիտացումը խթանելու և կոռուպցիոն ռիսկերի վրա կենտրոնանալու միջոցով, դ) սահմանադրական դաշտը. բազմաթիվ երկրներում անկախ մարմինների ստեղծումը հանդիպում է սահմանադրական արգելքների, ե) առկա իրավական դաշտը և քրեական արդարադատության պետական համակարգը, գ) առկա ֆինանսական ռեսուրսները:

Կոռուպցիայի դեմ պայքարի երեք մոդելները Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի առանձնահատկությունների հետ համադրելով՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ դրանցից առաջինն ու երկրորդն ըստ էության համարելելի չեն ՀՀ իրավական համակարգի հիմնարար առանձնահատկությունների հետ: Այսպես, թե՛ ունիվերսալ հակակոռուպցիոն մարմնի, թե՛ իրավապահ մարմինների մոդելները ենթադրում են մեկ պետական մարմնի շրջանակներում քննության, կանխարգելման և հանրային քարոզչության ու կրթության գործառույթների մեկտեղում, այսինքն՝ այնպիսի ունիվերսալ մարմնի ձևավորում, որը կմեկտեղի թե՛ կոռուպցիոն հանցագործությունների քննությունը, թե՛ դրանք կարարողների նկատմամբ քրեական հետապնդումը:

Մինչդեռ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում ենթադրյալ հանցավոր դեպքերի քննությունը և դրանց համար մեղադրանքի պաշտպանությունը հստակորեն փարանջարված են և իրականացվում են փարբեր մարմինների կողմից. նախաքննությունը մի շարք գործադիր մարմինների (ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ կառավարության առընթեր ոստիկանություն, ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե, ՀՀ կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայություն) կառուցվածքում գործող կամ կազմակերպորեն ինքնուրույն (ՀՀ հափուկ քննչական ծառայություն) քննչական մարմինների կողմից: Դրան հակառակ՝ դափարանում հանրային մեղադրանքի պաշտպանությունն իրականացվում է բացառապես ՀՀ դափախազության կողմից: Ոչ մի քննչական մարմին մեղադրանքի պաշտպանության գործառույթ չի իրականացնում: Միաժամանակ, դափախազությունը ոչ մի կերպ չի իրականացնում քննության գործառույթ: Այսպիսով՝ առնվազն այս երկու գործառույթների համատեղումը մեկ մարմնում հակահամակարգային կլինի ՀՀ իրավական համակարգի համար:

Ավելին, ՀՀ իրավական համակարգի այս առանձնահատկությունը բխում է ՀՀ Սահմանադրությունից, որի 103-րդ հոդվածը, նախ, դափախազությունը բնորոշում է որպես միասնական համակարգ, իսկ այնուհետև ամրագրում է դափախազության բացառիկ լիազորությունների սպառիչ ցանկը (այդ թվում՝ քրեական հետապնդման հարուցումը և դափարանում մեղադրանքի պաշտպանությունը): Այս սահմանադրական կարգավորման

պայմաններում հնարավոր չէ պեղական համակարգում ունենալ մարմին, որը, դուրս լինելով դաբախագության միասնական համակարգից, իրականացնի դաբախագական գործառույթ, օրինակ՝ կոռուպցիոն գործերով քրեական հետապնդման հարուցում և/կամ այդ գործերով դաբախանում մեղադրանքի պաշտպանություն:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի հետ միակ համապեղելի հակակոռուպցիոն մարմինների մոդելը կանխարգելիչ մարմինների մոդելն է:

3.3 Արդյունավետ քննություն և պատիժ

Հակակոռուպցիոն քաղաքականության հաջորդ քայլն արդյունավետ քննության իրականացումն է: Քննության արդյունավետությունը հիմնականում կախված է կոռուպցիոն հանցագործությունների շրջանակից, դրանց պարշաճ քրեականացումից, կոռուպցիոն հանցագործություններ բացահայտող, քննող, հետապնդող և պարժող մարմինների անկախությունից, վերջիններիս մասնագիտացվածությունից, կարողություններից, իրավապահ մարմինների միմյանց, կանխարգելող մարմինների և մասնավոր հատվածի միջև ձևավորված համագործակցությունից, քննությանը ներկայացվող դատավարական պահանջներից, այդ թվում՝ ապացուցման ստանդարտների վերաբերյալ կանոններից, քննության արդյունքներից, գործընթացի թափանցիկությունից և հրապարակայնությունից:

Արդյունավետ քննության ապահովման համար հույժ կարևորություն ունի կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը և դրանք բացահայտող, քննող և հետապնդող հակակոռուպցիոն մարմինների կարգավիճակն ու անկախությունը:

ա) Կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը և դրանց դասակարգումը:

Հարկ է նկատի ունենալ, որ Քրեական մոդելային օրենսգիրքը²², հիմնվելով Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի վրա, Կալիս է կոռուպցիոն հանցագործությունների հերևյալ դասակարգումը՝

1. կոռուպցիոն հանցագործություններ. ներառում է պաշտոնատար անձանց կաշառելը, օտարերկրյա պաշտոնատար անձանց և միջազգային կազմակերպությունների պաշտոնատար անձանց կաշառելը, կաշառքը մասնավոր հատվածում:
2. հարակից կոռուպցիոն հանցագործություններ. ներառում է ազդեցության չարաշահումը, պաշտոնեական դիրքը չարաշահելը, պաշտոնատար անձի կողմից գույքի հափշտակումը, ապօրինի յուրացումը կամ այլ՝ ոչ նպատակային օգտագործումը, ապօրինի հարստանալը, պարտակելը:

Մինչդեռ, ՀՀ քրեական օրենսգիրքը չի պարունակում պատիվ ու ակտիվ կաշառակերության վերաբերյալ ընդհանուր դրույթներ, այլ դրանց առանձին փորժեր մասնավոր են մեծաքանակ դրույթներում, ինչը պարշաճ նախադրյալներ չի ստեղծում արդյունավետ քրեական քաղաքականություն վարելու համար:

Այսպես, Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիոն հանցագործությունների ցանկը սահմանում է ՀՀ գլխավոր դատախազը: ՀՀ գլխավոր դատախազի՝ 2008 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 82 հրամանով հաստատվել, այնուհետև 2013թ. մարտի 19-ի թիվ 12 հրամանով լրամշակվել է կոռուպցիոն հանցագործությունների ցանկը: Ըստ այդմ՝ կոռուպցիոն հանցագործությունները ներառում են 31 հանցարեսակներ: Ցանկի ուսումնասիրությունը թույլ է փայլի կատարել երկու նկատառում՝

ա. ցանկում հանցագործությունների ներառումը չունի չափանիշեր և գիտական հիմնավորում, միասնական և հստակ չեն այն սկզբունքները, որից էլնելով որոշվում է հանցագործության կոռուպցիոն բնույթը: Օրինակ՝ ապօրինի ձեռքակալելը դիտարկվում է որպես կոռուպցիոն հանցագործություն, իսկ պաշտոնեական դիրքը օգտագործելով անձի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունը խախտելը՝ ոչ: Նմանապես, անհասկանալի է, թե ինչու շահադիտական դրույթներով և պաշտոնեական դիրքը օգտագործելով անձին հոգեբուժական հիվանդանոցում ապօրինի փեղավորելը կամ պահելը չի դիտարկվում որպես կոռուպցիոն հանցագործություն, սակայն ցուցմունք փալուն հարկադրելը կոռուպցիոն հանցագործություն է:

²² Model Codes for Post-Conflict Criminal Justice. Model Criminal Code, Vivienne O Connor and Colette Rausch, USIP Press, Washington D.C.

բ. կոռուպցիոն հանցագործություններ են համարվում այնպիսի արարքներ, որոնցում ընդգծված չէ պաշտոնեական դիրքը կամ վստահված իշխանությունն անձնական շահի սրացման համար օգտագործելու հանգամանքը՝ այն դեպքում, երբ կոռուպցիայի փաթեթը սահմանումներում առանցքային նշանակություն ունի հենց պաշտոնեական դիրքը կամ վստահված իշխանությունը անձնական շահի սրացման համար օգտագործելու հանգամանքը: Օրինակ՝ «Քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածում (Հարկերը, փուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը) և 353-րդ հոդվածում (Պարական ակտը չկատարելը) ամրագրված հանցագործությունները դիտարկվում են որպես կոռուպցիոն հանցագործություններ: Այս արարքների կատարումը կարող է պարունակել կոռուպցիոն ռիսկեր, սակայն կոռուպցիոն ռիսկերի պարունակման հավանականությունը բավարար չէ նման արարքները կոռուպցիոն հանցագործություններ դիտարկելու համար, այլ այդ արարքները «հավանականության» գործոնի ուժով պետք է դառնան հեղափոխական, մոնիթորինգի օբյեկտ և համապատասխան փաստերի, շարժառիթների ապացուցվածության պարագայում ստանան հեղափոխական համարժեք իրավական գնահատական և որակում:

Կոռուպցիոն հանցագործությունների ցանկի՝ ոչ պարզաձև մեթոդաբանությամբ կազմումը հնարավորություն չի տալիս ստանալ կոռուպցիայի և դրա դեմ պայքարի արդյունավետության հստակ պատկերը:

Այսպես՝ կոռուպցիոն հանցագործություն չհամարվող, սակայն որպես այդպիսին դիտարկված «Քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով 2012թ. ընթացքում դատարանում քննված գործերի ու դրանցով անցնող անձանց թիվն (24 գործ և 31 անձ) ամենաբարձրն է կոռուպցիոն բոլոր գործերի շարքում»²³: Այս հոդվածով դատարանում քննված գործերն ընդհանուրի 19%-ն են կազմում (գրեթե յուրաքանչյուր 5-րդ գործը): Դրան հաջորդում է 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը (Յուրացնելը կամ վարկելը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով)՝ 14% փարավածությամբ: Երրորդ տեղում է 214-րդ հոդվածը (Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը)՝ 12%:

Նախապարաստիված և ավարտված նյութերի ցուցանիշով այս հոդվածը նույնպես էականորեն գերազանցում է մյուս հոդվածների ցուցանիշերը: 2012թ.-ին 205-րդ հոդվածով նախապարաստիվել և ավարտվել են 325 նյութեր (նյութերի ընդհանուր ծավալի 39%-ը), որոնցից 86-ով (հարուցված բոլոր գործերի 28%-ը) քրեական գործեր են հարուցվել: Համեմատության համար նշենք, որ 2-րդ տեղում է գրնվում «Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածը (Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը), որով 2012թ.-ին նախապարաստիվել և ավարտվել են 127 նյութ (նյութերի ընդհանուր ծավալի 15%-ը), որոնցից 36-ով (հարուցված բոլոր գործերի 12%-ը) քրեական գործեր են հարուցվել»²⁴:

Այսպիսով, այս խնդրահարույց հոդվածի ցուցանիշերը գերազանցում են 2-րդ տեղում գրնվող հոդվածի համապատասխան ցուցանիշերը շուրջ 2.5 անգամ: Բնականաբար, մյուս հոդվածների ցուցանիշերի հետ առկա փարբերությունն ավելի հսկայական է:

Արդյունքում, կոռուպցիոն բնույթ չունեցող, սակայն կոռուպցիոն հանցագործություն դիտարկվող և մեծ տեսակարար կշիռ կազմող հանցագործության թվի նվազումը փոփոխում է կոռուպցիայի վիճակը և դրա դեմ պայքարի պարկերը Հայաստանում: «Քրեական օրենսգրքի 2012 թվականի գործունեության հաղորդման մեջ ուղղակիորեն նշված է. «2012 թվականին կոռուպցիոն հանցագործություններով նախապարաստիված նյութերի և հարուցված քրեական գործերի թվաքանակի նվազումը պայմանավորված է այն հանգամանքով,

²³ Վիճակագրական փվյալներ՝ 2012թ. ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների գործերով դատարանում մեղադրանքի պաշտպանության և դատական քննության արդյունքների վերաբերյալ, որը կարելի է գրնել <http://genproc.am/upload/File/Korupcion%20hanc-datakan%20qnnutyann%20ardvungner%202012%20tarekan%20vichtvvalner.pdf> հասցեում:

²⁴ Վիճակագրական փվյալներ՝ 2012թ. ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների գործերի նախաքննության և հետաքննության վերաբերյալ, որը կարելի է գրնել <http://genproc.am/upload/File/Korupcion%20hanc-hetaqnnutyann%20ev%20naxaqnnuthavn%20ardvungner%202012%20tarekan%20vichtvvalner.pdf> հասցեում:

որ կոռուպցիոն բնույթի նյութերում բարձր փեսակարար կշիռ են կազմում ՀՀ քր. օր.-ի 205-րդ հոդվածի հարկանիշներով նախապարտաստվող նյութերը:

2011 թվականին «Մտուցումների մասին» ՀՀ օրենքում կարարված փոփոխությանը սահմանվել են փարբեր՝ բարձր, միջին ռիսկայնության և ցածր ռիսկայնության փոփոխվարող սուբյեկտների ցանկեր: Բարձր ռիսկայնության ընկերություններում ստուգումները կարարվում են փարին մեկ անգամ, միջին ռիսկայնության ընկերություններում՝ 3 փարին մեկ անգամ, իսկ ցածր ռիսկայնության ընկերություններում՝ 5 փարին մեկ անգամ: Օրենքով սահմանված պահանջների պայմաններում ստուգումների քանակը նվազել է, որի պարճատով էլ հիմնականում նվազել է նախապարտաստվող նյութերի և հարուցված քրեական գործերի թվաքանակը»²⁵:

բ) Կոռուպցիոն հանցագործություններ բացահայտող, քննող, քրեական հետապնդում հարուցող և պարժող մարմինների մասնագիտացվածությունը, անկախությունը և համագործակցությունը

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի 61-րդ կետի համաձայն՝ կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումը և նախաքննությունը իրականացնում են ՀՀ հարուց քննչական ծառայությունը, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը, ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը: Համապարասխան գործառույթներ ունեն նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամտուների կոմիտե: Կոռուպցիոն հանցագործությունների նախաքննության և հետաքննության նկարմամբ հսկողությունը, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործություններով դարարանում մեղադրանքի պաշտպանությունը իրականացնում է ՀՀ գլխավոր դարախազությունը:

Թեև ՀՀ գլխավոր դարախազության կազմում գործում է Կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչությունը, այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով քրեական հետապնդում հարուցում, հետաքննության և նախաքննության օրինականության նկարմամբ հսկողություն են իրականացնում և դարարանում մեղադրանք են պաշտպանում ոչ թե բացառապես Կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության աշխատակիցները, այլ նաև դարախազության համակարգի այլ դարախազներ, ինչը մասնագիտացված ստորաբաժանման գոյությունը և գործունեությունն ինքնին դարձնում է ինքնանպարակ: Միաժամանակ, կոռուպցիոն հանցագործություններ քննող մարմինների բազմազանության պարագայում առարկայական և սուբյեկտային չափանիշերով ենթակայության չվերանայումը չի ապահովում քննչական մարմինների գործունեության արդյունավետությունը:

Մյուս կողմից՝ թեև ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան պահանջում է ապահովել կոռուպցիոն հանցագործություններ քննող, քրեական հետապնդում հարուցող և պարժող մարմինների անկախությունը²⁶, առկա իրավակարգավորումը չի ապահովում կոռուպցիոն հանցագործություններով ներգրավված դարախազների լիարժեք անկախությունը:²⁷

Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության վիճակը

²⁵ Հաղորդում Հայաստանի Հանրապետության դարախազության 2012 թվականի գործունեության մասին, որը կարելի է գրնել <http://genproc.am/upload/File/Haxordum%202012.pdf> հասցեում:

²⁶ Կոռուպցիայի դեմ կոնվենցիա, հոդված 11


²⁷ Legislative guide for the implementation of the United Nations Convention against Corruption, երկրորդ հրարարակություն, 2012, էջեր՝ 462-465, որը կարելի է գրնել http://www.unodc.org/documents/treaties/UNCAC/Publications/LegislativeGuide/UNCAC_Legislative_Guide_E.pdf հասցեում:

ներկայացվում է դարախազությանից սրացված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ փյալների ամփոփման հիման վրա:²⁸

Վիճակագրական փյալների վերլուծության համար օգտագործվել են 2010, 2011 և 2012թթ.-ին ՀՀ-ում կոռուպցիոն հանցագործություններով նախաքննության և դատական քննության արդյունքների վերաբերյալ վիճակագրական փյալները:

Վիճակագրական փյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ նախապարաստված և ավարտված նյութերի ծավալը նվազման միտում է ցուցաբերում 2010-2012թթ.-ին՝ 895-ից աննշան աճ գրանցելով 2011թ.-ին և ապա՝ 2012թ.-ին անկումով հասնելով 830-ի:

Գծապատկեր 4. Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ նախապարաստված և ավարտված նյութերի ծավալը 2010-2012թթ.



Ըստ ՀՀ դարախազության 2012թ. գործունեության մասին հաղորդման²⁹ 2011թ. ընթացքում գրանցվել է 2010թ. համեմատությամբ հանցագործությունների աճ 7,1%-ով, իսկ 2012թ.-ին դեպքերը նվազել են 4,8%-ով:

²⁸ Որպես կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ռազմավարական դրույթի մոնիթորինգային ցուցիչ նշվել են Հայաստանի Հանրապետությունում սահմանված է կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության վարման միասնական համակարգի ներդրումը, կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ հարուցված քրեական գործերի թվի հարաբերությունը ավարտված գործերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան արդյունավետ է իրավապահ մարմինների կարծված գործերի թվի հարաբերությունը հարուցված քրեական գործերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է գրոյին այնքան արդյունավետ է իրավապահ մարմինների գործունեությունը կոռուպցիայի դեմ պայքարում), կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ դատարանի կողմից կայացված դատավճիռների թվի հարաբերությունը հարուցված քրեական գործերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան արդյունավետ է իրավապահ մարմինների գործունեությունը կոռուպցիայի դեմ պայքարում), ՋԼՄ-ներով ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից իրավասու մարմիններին ուղղված կոռուպցիոն հանցագործությունների մասին հաղորդումների թվի հարաբերությունը, նույն ժամանակահատվածում, այդ մարմինների կողմից կոռուպցիոն հանցագործությունների մասով հարուցված քրեական գործերի ընդհանուր թվաքանակին (որքան մոտ է մեկին այնքան արդյունավետ է իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության միջև համագործակցությունը), ֆիզիկական և իրավաբանական անձանց, լրագրության միջոցների հաղորդումներով հարուցված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերի հարաբերությունը հեղաքննության մարմնի, քննիչի, դարախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին փյալների հանցագործության նյութական հեղքերի և հեղանքների հայտնաբերմամբ հարուցված գործերի թվին:

²⁹ Հաղորդում Հայաստանի Հանրապետության դարախազության 2012 թվականի գործունեության մասին, որը կարելի է գտնել <http://genproc.am/upload/File/Haxordum%202012.pdf> հասցեում:


Ըստ դադարադադարության վերոնշյալ հաղորդման՝ 2012թ.-ին նախապարաստվել է կոռուպցիոն բնույթի 829 նյութ³⁰՝ նախորդ տարվա համեմատ 84-ով կամ 9%-ով պակաս³¹:

Այսպիսով՝ նկատվում է նվազման չափերի տարբերություն. եթե 2012թ.-ին բոլոր դեպքերը նվազել են 4.8%-ով, ապա կոռուպցիոն հանցագործությունները՝ 9%-ով: Սա նշանակում է, որ բոլոր հանցագործությունների ընդհանուր ծավալում կրճատվել է կոռուպցիոն հանցագործությունների ծավալը:

Բացի այդ, շապես՝ 22%-ով նվազել է կոռուպցիոն հանցագործություններով 2012թ.-ին 2011թ. համեմատ հարուցված քրեական գործերի թիվը:

Ընդ որում, յուրաքանչյուր տարվա ընթացքում նախապարաստված և ավարտված նյութերի ծավալից հարուցված քրեական գործերի համամասնությունը ևս նվազման միտում է ցուցաբերում: Եթե 2010թ.-ին հարուցված քրեական գործերը կազմել են նախապարաստված և ավարտված նյութերի 43%-ը, ապա 2012թ.-ին այս համամասնությունը նվազել է՝ կազմելով 37%:

Գծապատկեր 5. Հարուցված քրեական գործերի տոկոսը նախապարաստված և ավարտված նյութերի ծավալում 2010-2012թթ.




Դրա փոխարեն 3 տարիների ընթացքում աճել է քրեական գործի հարուցումը մերժելու որոշումների թվի համամասնությունը (նախապարաստված և ավարտված նյութերի ծավալի մեջ) 45%-ից հասնելով 50%-ի:

Գծապատկեր 6. Քրեական գործի հարուցումը մերժելու որոշումների թվի համամասնությունը 2010-2012թթ.


³⁰ Ներկայացված հաշվետվություններում բացակայում են տվյալներ ներկայացված հաղորդումների և դրանց հիման վրա նախապարաստվող նյութերի համամասնության վերաբերյալ:

³¹ Հաղորդում Հայաստանի Հանրապետության դադարադադարության 2012 թվականի գործունեության մասին, որը կարելի է գտնել <http://genproc.am/upload/File/Haxordum%202012.pdf> հասցեում:




Հեղափոխություն է, որ 2012թ.-ին շեշտակիորեն ավելացել է արդարացման հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու որոշումների ծավալը: Այսպես, եթե 2010թ.-ին արդարացման հիմքով քրեական գործ չէր հարուցվել դեպքերի 53%-ում, ապա 2012թ.ին՝ 73%-ում:

Գծապատկեր 7. Արդարացման հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու որոշումների ծավալը 2010-2012թթ.




Եթե դիտարկենք ավարտված գործերի ծավալի մեջ արդարացման հիմքով կարճված գործերի ծավալը, ապա այսօրեղ ևս ակնհայտ է արդարացման հիմքով կարճված գործերի համամասնության փարեցփարի աճը: 2010թ.-ին արդարացման հիմքով կարճվել է ավարտված գործերի 17%-ը, 2011-ին՝ 20%-ը, իսկ 2012-ին՝ 22%-ը:

Գծապատկեր 8. Ավարտված գործերի ծավալի մեջ արդարացման հիմքով կարճված գործերի ծավալը 2010-2012թթ.



Չնայած վերը նկարագրված միտումներին, մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերի փոփոխյին համամասնությունն ավարտված քրեական գործերի շարքում եական փոփոխություններ չի կրել 3 փարինների ընթացքում: Այս ցուցանիշը կազմել է 53%՝ 2010թ.-ին, 49%՝ 2011թ.-ին և կրկին 53%՝ 2012թ.-ին:

Գծապարկեր 9. Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերի փոփոխյին համամասնությունն ավարտված քրեական գործերի շարքում 2010-2012թթ.



2012թ.-ին դատարաններում քննվել է կոռուպցիոն բնույթի ընդամենը 125 քրեական գործ՝ 187 անձի նկատմամբ, իսկ 2011թ.-ին՝ 129 քրեական գործ՝ 189 անձի նկատմամբ: Չնայած այն բանին, որ նախորդ փարվա համեմատ 4 գործ պակաս է քննվել, սակայն 9-ով աճել է այն գործերի թիվը, որոնցով անձինք դատապարտվել են՝ 109-ից կազմելով 118: 22-ով աճել է դատապարտված անձանց թիվը՝ 158-ից կազմելով 180: Հերևաբար, նկատվում է կոռուպցիոն բնույթի հանցագործություններով դատապարտված անձանց համամասնության աճ ամբաստանյալների ընդհանուր ծավալի մեջ:

2012թ.-ին կոռուպցիոն բնույթի հանցագործություններով դատապարտված 180 անձանցից 41-ը (23%) համաներման կիրառմամբ ազատվել են պարժից: 2011թ.-ին դատապարտված 158 անձանցից համաներման կիրառմամբ պարժից ազատվել են 73-ը (46%): 2010թ.-ին դատապարտված 182 անձանցից 50-ն են (27%) համաներմամբ ազատվել պարժից: Այսպիսով՝ համաներման կիրառմամբ պարժից ազատված անձանց փոխորդ դատապարտված անձանց ընդհանուր թվի մեջ 2010թ. համեմատ եական աճ է գրանցել 2011թ.-ին, իսկ 2012թ.-ին կրկին նվազել է՝ հասնելով 23%-ի:

³² Հաղորդում Հայաստանի Հանրապետության դատախազության 2012 թվականի գործունեության մասին, որը կարելի է գտնել <http://genproc.am/upload/File/Haxordum%202012.pdf> հասցեում:

2012 թվականին նախապարաստված և ավարտված նյութերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ հարուցված քրեական գործերի տոկոսն ամենաբարձրն է «Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը» հանցագործության պարագայում՝ 100%: Երկրորդ տեղում է «Յուրացնել կամ վաճառել» հանցագործությունը՝ 71%, 3-րդ տեղում «Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը»՝ 56%: 4-րդ և 5-րդ տեղերում են գրավում «Պաշտոնական լիազորությունները չարաշահելը» և «Հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամորթեն խուսափելը» հանցագործությունները՝ համապատասխանաբար 36% և 32% արդյունքներով:

2012թ.-ին ավարտված գործերի թվից մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերի վերաբերյալ թվային տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ավարտված գործերի թվից մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերի տոկոսը ամենաբարձրն է «Պաշտոնական լիազորությունները չարաշահելը» հանցագործության դեպքում՝ 55%: Երկրորդ տեղում է «Յուրացնել կամ վաճառել» հանցագործությունը՝ 52%, 3-րդ տեղում «Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը»՝ 50%: 4-րդ և 5-րդ տեղերում են գրավում «Հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամորթեն խուսափելը» և «Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը» հանցագործությունները՝ համապատասխանաբար 40% և 21% արդյունքներով:

Այսպես, թեև «Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը» հանցագործության վերաբերյալ պարաստված բոլոր 27 նյութերով 27 քրեական գործեր են հարուցվել (100%-անոց արդյունք), սակայն ավարտված 29 քրեական գործերից միայն 6-ն են մեղադրական եզրակացությամբ ուղարկվել դատարան (ընդամենը 21%-ը կամ յուրաքանչյուր 5-րդ գործը): «Պաշտոնական կեղծիքը» հանցագործությամբ ավարտված քրեական գործերից միայն յուրաքանչյուր 3-րդ գործն է մեղադրական եզրակացությամբ ուղարկվել դատարան:

2012թ.-ին նախապարաստված և ավարտված նյութեր առկա չեն «օրինական ձեռնարկավորական և այլ փրկարարական գործունեությանը խոչընդոտելը», «մաքսանենգությունը», «հակամրցակցային գործունեությունը», «ձեռնարկավորական գործունեությանն ապօրինի մասնակցելը», «իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիպական նպատակով օգտագործելը», «արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելը», «ապօրինի ձեռքբերել կամ կալանավորելը», «սպառնալից կեղծիքը», «քրեական պարաստանապովությունից ապօրինի ազատելը» հանցագործությունների վերաբերյալ:

Ավելին, թեև մեկական նյութեր են նախապարաստվել «դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից ցուցմունք տալուն հարկադրել», «ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնել» հանցագործությունների վերաբերյալ, սակայն այդպես էլ քրեական գործ չի հարուցվել: «Դատական ակտը չկատարելը» հանցագործության վերաբերյալ 4 դեպքով նյութեր են նախապարաստվել, սակայն կրկին որևէ քրեական գործ չի հարուցվել:

4. Կոռուպցիայի դեմ պայքարում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման վիճակը

2004թ. հունվարին Հայաստանը անդամակցել է Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբ ԳՐԵԿՈ-ին, իսկ 2004թ. հունիսին և դեկտեմբերին, համապատասխանաբար ստորագրել և վավերացրել է Եվրոպայի խորհրդի «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան և «Կոռուպցիայի մասին» քաղաքացիական իրավունքի կոնվենցիան:

2010 թվականին նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 3-ը կայացած 49-րդ լիագումար նիստում Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի՝ ԳՐԵԿՈ-ի կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության գնահատման երրորդ փուլի զեկույցով Հայաստանի Հանրապետությանը հանձնարարվել էր ներպետական օրենսդրությունը համապարասխանեցնել «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի, ինչպես նաև «Կոռուպցիայի մասին» քաղաքացիական իրավունքի Կոնվենցիաների պահանջներին: Զեկույցը ներառում էր «Մեղադրանքներ» և «Հայաստանում կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկություն» թեմաները: «Մեղադրանքներ» թեմայի շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը արվել էին թվով 8, իսկ «Հայաստանում կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկություն» թեմայի շրջանակներում՝ 11 հանձնարարականներ: Միաժամանակ զեկույցով առաջարկվել էր մինչև 2012 թվականի հունիսի 30-ը ներկայացնել կարարողական զեկույց, ինչը սահմանված ժամկետում ուղարկվել է GRECO-ի քարտուղարություն:

Ընդհանուր առմամբ, գնահատման արդյունքներով բոլոր 19 առաջարկություններից ամբողջությամբ կատարված համարվեցին 16-ը, մասնակի՝ 3-ը և չկատարված 0-ն, այսինքն՝ գրանցվեց 85%-ի կարարողական, ինչն աննախադեպ ցուցանիշ էր:

Սա ԳՐԵԿՈ-ի գնահատման 3-րդ փուլի համապարասխանության զեկույցների կարարողականների շարքում համարվում է մինչ օրս եղած լավագույն ցուցանիշը:

Զեկույցի վերջում ՀՀ պարլիտարության ղեկավարին առաջարկվել է մինչև 2014 թվականի հունիսի 30-ը լրացուցիչ տեղեկություններ փորձադրել մասնակի կատարված երեք առաջարկությունների³³ կապակցությամբ:

2005թ.-ին ՀՀ-ը ստորագրել է Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիան, որը վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006թ. հոկտեմբերի 23-ին, և ուժի մեջ է մտել 2006թ. նոյեմբերի 11-ին:

Կոնվենցիան հիմնականում սահմանում է հերկյալ ուղղություններով պարտավորություններ՝

- կանխարգելման միջոցներ.
- քրեականացումը և իրավապահ գործունեություն.
- միջազգային համագործակցություն.
- կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում սպառված ակտիվները վերադարձնելու միջոցներ:

³³ 1. «Մեղադրանքներ» թեմայի vii-րդ առաջարկությունը՝ վերլուծել ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի (Կաշառք փալը) 4-րդ, 312.1 հոդվածի (Պաշտոնաբար անձ չհանդիսացող հանրային ծառայողին ապօրինի վարձաբրություն փալը) 4-րդ և 200-րդ հոդվածի (Առևտրային կաշառքը) 5-րդ մասերը և համապարասխանաբար վերանայել պարասխանավորությունից և/կամ/ պարժից մեխանիկորեն և նաև պարտադիր կերպով ազատումը, որը փորձադրվում է գործուն զոջալու դեպքում, և կարարելագործել դրույթների միարեսակությունը՝ հարակեցնելով այն պայմանները, որոնց հիման վրա կարող է վկայակոչվել գործուն զոջալու պաշտպանության միջոցը և ներմուծելով լրացուցիչ երաշխիքներ անհարկի կիրառության հնարավորությունը նվազեցնելու համար:

2. «Կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկություն» թեմայի viii-րդ առաջարկությունը՝ ապահովել կուսակցությունների և նախընտրական քարոզչության ֆինանսավորման դիտանցմանն ուղղված անկախ և ինքնագրված մեխանիզմ, որն օժրված կլինի անհրաժեշտ մանրարով, լիագրությամբ, ինչպես նաև ֆինանսական և կադրային ռեսուրսներով այդ ֆինանսավորումը արդյունավետորեն և պրոակտիվ (պրոֆիլակտիկ) կերպով վերահսկելու, կուսակցությունների ֆինանսավորմանը վերաբերող կարգավորիչ նորմերի ենթադրյալ խախտումները քննելու և, անհրաժեշտության դեպքում, սանկցիաներ կիրառելու համար:

3. «Կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկություն» թեմայի xi-րդ առաջարկությունը՝ երկարաձգել «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ ընտրական օրենսգրքի դրույթներով սահմանված վարչական իրավախախտումների համար վաղեմության ժամկետը:

Կոնվենցիան պարտավորեցնում է անդամ պետություններին ստեղծել կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների համակարգ՝ և՛ կանխարգելիչ, և՛ իրավապահ³⁴:

2012թ. հունիսի 18-22-ին Վիեննայում կայացել է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի անդամ երկրների կոնֆերանսի կողմից ստեղծված կոնվենցիայի իրականացման վերահսկման խմբի երրորդ հանդիպումը, որի ժամանակ կատարված վիճակահանությամբ հաստատվել են Հայաստանում կոնվենցիայի կիրառման մոնիթորինգը իրականացնող երկու երկրները՝ Ղրղզստանը և Լիբիան:

Հայաստանի Հանրապետությունը առաջին անգամ է ենթարկվել ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի իրականացման մոնիթորինգին, որի շրջանակներում գնահատվել է Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի 3-րդ՝ «Քրեականացում և իրավապաշտպան գործունեություն» և 4-րդ՝ «Միջազգային համագործակցություն» գլուխների իրականացման արդյունքները:

ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի իրականացմանն առնչվող հարցաշարը լրացվել է OMNIBUS Survey համակարգչային ծրագրի միջոցով՝ ըստ աշխատանքային խմբում ընդգրկված ՀՀ իրավասու մարմինների:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից՝ ՀՀ իրավասու գերատեսչությունների ներկայացրած հարցաշարերի պարասխանների ուսումնասիրության և ամփոփման աշխատանքներն ավարտվել են և լրացված հարցաշարը ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի քարտուղարություն է ներկայացվել 2013թ. հունվարի 10-ին, որի վերաբերյալ տեղեկացվել է նաև ՀՀ կառավարությունը ՀՀ արդարադատության նախարարության 22.01.2013թ. 04/294-13 թվակիր նամակով: 2013թ. հունիսի դրությամբ, մոնիթորինգի վերջնական զեկույցը դեռ չի ներկայացվել Հայաստանի Հանրապետությանը:

Հայաստանը ներգրավված է նաև **Տնփեսական համագործակցության և զարգացման կազմակերպության**՝ նախկին խորհրդային 8 երկրների համար նախաձեռնած «Սփամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլան» ծրագրում: Այն կոչված է բարելավելու նշված երկրների հակակոռուպցիոն քաղաքականությունը միջազգային փորձագետների կողմից մշակված առաջարկությունների միջոցով:

Տնփեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի համար հակակոռուպցիոն ցանցի Սփամբուլյան

³⁴ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն, որը վերաբերում է հակակոռուպցիոն կանխարգելիչ մարմին ստեղծելու պարտավորությանը:

1. Ցուրաքանչյուր մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ապահովի մարմնի կամ, անհրաժեշտության դեպքում, մարմինների առկայությունը, որոնք իրականացնում են կոռուպցիայի կանխարգելում այնպիսի միջոցների օգնությամբ, ինչպիսիք են.

ա) սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածում նշված քաղաքականության իրականացումը և, համապատասխան դեպքերում, այդպիսի քաղաքականություն իրականացման հսկողությունը և համակարգումը:

բ) կոռուպցիայի կանխարգելման հարցերով գիտելիքներն ընդլայնելը և փարածելը:

2. Ցուրաքանչյուր մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, սույն հոդվածի 1-ին կետում նշված մարմնին կամ մարմիններին պետք է ապահովի անհրաժեշտ ինքնուրույնությամբ, որպեսզի մարմինը կամ մարմինները կարողանան իրականացնել իրենց գործառնություններն արդյունավետ և անհարկի ազդեցությունից ազատված: Կորամադրվեն անհրաժեշտ նյութական ռեսուրսներ և մասնագիտացված անձնակազմ, ինչպես նաև անձնակազմի այնպիսի դասընթացներ, որոնք կարող են պահանջվել նրանց գործառնությունների իրականացման համար:

3. Ցուրաքանչյուր մասնակից պետություն պետք է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հայտնի այն մարմնի կամ մարմինների անվանումները և հասցեները, որոնք կարող են աջակցել մյուս Մասնակից պետություններին կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ որոշակի միջոցների մշակման և իրականացման գործում»:

գործողությունների ծրագրի 10-րդ մոնիթորինգի նիստում՝ 2011 թվականի սեպտեմբերի 30-ին ընդունվել է Հայաստանի վերաբերյալ մոնիթորինգի երկրորդ զեկույցը:

Այն վերլուծում է Հայաստանում արձանագրված առաջընթացը՝ կապված հակակոռուպցիոն բարեփոխումների մշակման և 2006 թվականին կայացած մոնիթորինգի առաջին փուլից ի վեր Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի համաձայն ստացված առաջարկությունների իրականացման հետ:

Զեկույցում վերլուծության են ենթարկվում նաև վերջին զարգացումները և նոր առաջարկություններ են ներկայացվում երեք ոլորտներում՝ հակակոռուպցիոն քաղաքականություն, կոռուպցիայի քրեականացում և կոռուպցիայի կանխարգելում: Զեկույցում արձանագրվում է, որ 24 առաջարկություններից ամբողջովին կատարվել են 3-ը, 9-ը՝ կատարվել են մեծամասամբ, 11-ը՝ մասնակիորեն և 1-ը չկատարված է: Զեկույցը պարունակում է 20 նոր առաջարկություններ, որոնք ներկայացված են «Հակակոռուպցիոն քաղաքականություն», «Հակակոռուպցիոն մարմիններ», «Կոռուպցիայի քրեականացում» և «Կոռուպցիայի կանխարգելում» բաժինների ներքո:

«Հ-ը ներգրավված է Եվրոպական հարևանության քաղաքականության և Արևելյան գործընկերության գործընթացներում: Եվրոպական հարևանության քաղաքականության նպատակն է հաստատել ավելի խորքային քաղաքական համագործակցություն և փոփոխական մերձեցում ԵՄ-ի հետ: Արևելյան գործընկերությունը ենթադրում է քաղաքական ինտեգրման ավելի բարձր աստիճան, որն իր մեջ ներառում է նաև ասոցացման պայմանագրերի կնքման նոր հնարավորություններ, ինչպես նաև Եվրոպական միության փոփոխության մեջ ներգրավվելու հեռանկարային նպատակներ: Արևելյան գործընկերության շրջանակներում բազմակողմ համագործակցությունն իրականացվում է չորս թեմատիկ պլատֆորմների միջոցով. 1. Ժողովրդավարություն, արդյունավետ կառավարում և կայունություն, 2. փոփոխական ինտեգրում և համապատասխանեցում ԵՄ քաղաքականության հետ 3. Էներգետիկ անվտանգություն և 4. մարդկանց միջև շփումներ:

Եվրամիության եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում Եվրոպական միությունն ու Հայաստանը 2006թ.-ին վավերացրել են գործողությունների ծրագիր, որում կոռուպցիայի դեմ պայքարը ներառված է որպես գերակա ոլորտ: Հայաստանի գործողությունների ծրագրում հատուկ գերակայությունների մեջ ներառվել են 8 հակակոռուպցիոն միջոցառումներ, այդ թվում՝ պարզաձև քննության ապահովումը և կոռուպցիոն հանցանքների հետապնդումը, Զրեական օրենսգրքի համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին, դատավորների և դատախազների էթիկայի կանոնների մշակումը, պաշտոնյաների կողմից գույքի և եկամտի սխալ հայտարարագրման դեպքում պարասխանավորության սահմանումը, դատավորների աշխատավարձերի բարձրացումը և այլն:

Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում ընդունվել է «Ռազմավարություն Հայաստանի համար», որը նախատեսում է գործողություններ 2007-2013 թվականների համար: Այն ամրագրում է բարեփոխումների երեք գերակա ոլորտներ, որոնցից առաջինը վերաբերվում է Ժողովրդավարական կառույցների զարգացմանը և արդյունավետ կառավարմանը: Նշված ոլորտն ունի երեք ենթաօլորտներ. 1. իրավունքի գերակայություն և դատախազական բարեփոխումներ, 2. հանրային կառավարման, այդ թվում՝ փողկան ինքնակառավարման համակարգի բարեփոխումներ, որը ներառում է նաև ֆինանսների կառավարում, ներքին ֆինանսական հսկողություն և արտաքին աուդիտ, կոռուպցիայի դեմ պայքար և 3. մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանություն, քաղաքացիական հասարակություն:

Սույն ռազմավարությունը ձևակերպում է ընդհանուր նպատակներ, որի հիման վրա ընդունվել է Ազգային շրջանակային ծրագիր 2007-2010 թվականների համար: Ծրագիրը նախատեսված է Եվրոպական հարևանության և համագործակցության մեխանիզմի համար, որն աջակցում է Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացմանը: Ներկայումս մշակվել է նաև Ազգային շրջանակային ծրագիր 2011-2013 թվականների համար, որը նախատեսում է գերակա ոլորտներ՝ ԵՄ-Հայաստան երկկողմանի հարաբերությունների

զարգացման համար: Սույն ծրագրի շրջանակներում ակնկալվում է զարգացնել իրավապահ մարմինների կոռուպցիայի դեմ պայքարելու կարողությունները, ապահովել հակակոռուպցիոն ռազմավարության արդյունավետ իրականացումը և հզորացնել վարչական կարողությունները, ապահովել հանրային ֆինանսների կառավարման արդյունավետությունները, ներառյալ ծախսումների թափանցիկությունը: Ներկայացված արդյունքների ապահովման համար հատկացվել է փրամադրված ֆինանսական միջոցների 30-35 տոկոսը, որը կազմում է շուրջ 47-55 միլիոն եվրո:

Արևելյան գործընկերության շրջանակում 2012թ. մայիսին 15-ին ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով գերագույն հանձնակարարի կողմից իրապարակվել է ԱլԳ 2012-13 ճանապարհային քարտեզը, որը բաղկացած էր երեք մասերից՝ Եվրոպական խորհրդարանին, հորհրդին, Եվրոպական փոփոխական և սոցիալական հարցերով հանձնաժողովին և ռեզիոնալ հանձնաժողովին ուղղված համափնտրող հաղորդագրությունից, և երկկողմ ու բազմակողմ ձևաչափեր ներառող ճանապարհային քարտեզից: Գերագույնի քարտեզը «Ժողովրդավարություն, արդյունավետ կառավարում և կայունություն» գերակա ոլորտի ներքո ձևակերպել է կոռուպցիայի դեմ պայքարի նպատակ, որի շրջանակներում նախատեսվում է խթանել լավ կառավարումը, պայքարել կոռուպցիայի և փոփոխական հանցագործությունների դեմ, վերանայել կոռուպցիայի դեմ գոյություն ունեցող համակարգերը (օրենսդրական, քաղաքական և ինստիտուցիոնալ շրջանակներում, ներառյալ իրավապահ մարմինները), մեծացնել հակակոռուպցիոն պայքարի վերաբերյալ քաղաքացիական ծառայողների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գիտելիքները:

2011 թվականի սեպտեմբերի 20-ին 8 հիմնադիր երկրներ (Բրազիլիա, Ինդոնեզիա, Մեքսիկա, Նորվեգիա, Ֆիլիպիններ, Հարավային Աֆրիկա, Միացյալ Թագավարություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ պաշտոնապես ստեղծեցին Բաց կառավարման համագործակցությունը՝ հայտարարելով թափանցիկ, հաշվետու, արդյունավետ կառավարում իրականացնելու իրենց մտադրության մասին: 2012 թվականի ապրիլի 17-ին ՀՀ-ը միացավ այս հայտարարությանը և ստանձնեց մի շարք պարտավորություններ, որոնց շարքում էր կոռուպցիայի դեմ պայքարը: Մասնավորապես, ՀՀ-ը պարտավորվել է կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով խթանել արդյունավետ համագործակցություն իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, պարբերաբար քննարկել քաղաքացիական հասարակության հետ մոնիթորինգների և հետազոտությունների արդյունքները՝ գնահատելու համար կոռուպցիայի մակարդակը և փարձվածությունը, ինչպես նաև հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցությունը: Պետությունը նաև ստանձնել է կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդում քարտուղարություն հիմնելու պարտավորություն:

5. Առաջարկություններ

Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնելու համար հարկավոր է իրականացնել հետևյալ համալիր փոփոխությունները.

1. Վերափոխել հակակոռուպցիոն մարմինների ինստիտուցիոնալ համակարգը: Առաջարկվում է ներդնել հակակոռուպցիոն մարմնի եռօղակ մոդելը՝ հետևյալ կառուցվածքով.

I. Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ (կամ Հակակոռուպցիոն խորհուրդ): ՀՀ վարչապետի կողմից ղեկավարվող խորհուրդը նախատեսվում է ձևավորել հետևյալ կազմով՝ ա) ՀՀ կառավարության անդամներ, բ) ՀՀ ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերի ներկայացուցիչներ, գ) Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Խորհուրդն իր աշխատանքներին, ըստ անհրաժեշտության, կարող է ներգրավել նաև այլ անձանց, օրինակ՝ ՀՀ վերահսկիչ պալատի նախագահին, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին, ՀՀ գլխավոր դատախազին և այլն: Խորհուրդն ապահովում է հակակոռուպցիոն քաղաքականությունների իրականացման նկատմամբ արդյունավետ վերահսկողություն բարձրագույն քաղաքական մակարդակում:

II. Քարտուղարություն³⁵: Մշտապես գործող կառույցը ձևավորվում է Կառավարության կողմից՝ մասնագիտացվածության սկզբունքի հիման վրա, որի շրջանակներում կառույցի աշխատանքներին մրցութային կարգով ներգրավվում են անկախ փորձագետներ:

III. Թիրախավորված մինչև յոթ ոլորտներում կամ բնագավառներում գործող հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող պատասխանատու մարմիններ (գործադիր իշխանության մարմիններ): Ոլորտների ընտրությունը կարող է հիմնվել կոռուպցիայի տարածվածության վերաբերյալ հետազոտությունների արդյունքների, պեղական մարմին - քաղաքացի շփումների ծավալի ու հաճախակիության, ինչպես նաև հանրային ծառայությունների բարելավման պահանջների վրա:

2. Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի, քարտուղարության և հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող պատասխանատու մարմինների արդյունավետ փոխհամագործակցությունն ապահովելու համար հստակ տարանջատել հակակոռուպցիոն միջոցառումների մշակման, իրականացման, գնահատման, այդ գործընթացների ուղղորդման, համակարգման և վերահսկման գործառույթները, ինչպես նաև նախանշել իրավասու մարմինների լիազորությունների և պատասխանատվության սահմանները: Առաջարկվում է այդ մարմինների փոխգործակցությունը կառուցել հետևյալ մոդելումների վրա.

I. Հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող պատասխանատու մարմինները մշակում են հակակոռուպցիոն միջոցառումների ոլորտային ծրագրերը, ապահովում դրանց հրապարակումն ու հանրային քննարկումը, ինչպես նաև պարզաձև իրականացումը:

³⁵ Մշտապես գործող կառույցի ընտրված անվանումը պայմանական է: Կառույցի վերջնական անվանումը ենթակա է հստակեցման՝ պայմանավորված նաև այդ մարմնին տրված լիազորությունների շրջանակով:

- II. Քարտուղարությունն իրականացնում է հակակոռուպցիոն միջոցառումների ոլորտային ծրագրերի մշակման աշխատանքների համակարգումը, ծրագրերի իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ամփոփումը և գնահատումը:
- III. Խորհուրդը քարտուղարության կողմից ներկայացված հաշվետվության հիման վրա ապահովում է հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման նկատմամբ արդյունավետ վերահսկողություն:
3. Մշակել հակակոռուպցիոն քաղաքականության իրացման հսկակ կառուցակարգ (մեխանիզմ): Այն պետք է հիմնված լինի հետևյալ բաղադրիչների վրա.
- I. Առանձին ոլորտներում կամ բնագավառներում կոռուպցիայի կոնկրետ պարճառները պետք է վերհանվեն պարասխանաբար պետական կառավարման մարմինների կողմից, ովքեր պարտավոր են նախաձեռնել և իրականացնել կոռուպցիայի մակարդակի, տեսակների և տարածվածության, կոռուպցիոն ռիկների վերաբերյալ ոլորտային հեղազոտություններ:
- II. Հակակոռուպցիոն միջոցառումների ոլորտային ծրագրերի մշակումն ու լիարժեք իրականացումն ապահովվում է ոլորտային պարասխանաբար մարմինների կողմից: Միջոցառումները պետք է արտացոլեն ՀՀ-ի կողմից սրանձնաձեռն միջազգային պարտավորությունների և միջազգային կազմակերպությունների կողմից ՀՀ-ին ուղղված հանձնարարականների կարարմանն ուղղված գործողություններ: Միջոցառումներով նախատեսվող գործողությունները պետք է ունենան իրացման երաշխիքներ, այդ թվում՝ ռեսուրսների ապահովվածություն և գործողության կարարմանն ու արդյունքի/ազդեցության միջև կապի հիմնավորվածություն:
- III. Իրականացված միջոցառումների և դրանց արդյունքների վերաբերյալ պարասխանաբար մարմինները սահմանված ձևաչափով պարբերական հաշվետվություններ են ներկայացնում քարտուղարությանը:
- IV. Միջոցառումների իրականացմանը զուգահեռ՝ հակակոռուպցիոն քաղաքականության պարասխանաբար մարմինները կազմակերպում են հակակոռուպցիոն քարոզչություն, հանրային իրազեկում և պարբերական հեղազոտություններ, գնահատումներ, այդ թվում՝ ծրագրի ազդեցության գնահատում կոռուպցիայի մակարդակի ու տարածվածության վրա: Այս ուղղություններով կարարված աշխատանքների վերաբերյալ պարասխանաբար մարմինները ևս հաշվետվություններ են ներկայացնում քարտուղարությանը:
- V. Քարտուղարությունն ապահովում է կոռուպցիայի ընդհանուր բնույթ ունեցող դրսևորումների և պարճառների ամբողջական ուսումնասիրությունը: Քարտուղարությունը վերանայում է հակակոռուպցիոն օրենսդրությունը, մշակում է կոռուպցիայի դեմ պայքարի ուղեցույցներ, միջոցառումների իրականացման և դրանց գնահատման, հեղազոտությունների անցկացման ընթացքում ոլորտային պարասխանաբար մարմիններին ցույց է տալիս մեթոդական և այլ աջակցություն, համակարգում է հակակոռուպցիոն ոլորտային ծրագրերի մշակման և դրանցում նախատեսված միջոցառումների իրականացման աշխատանքները:
- VI. Իր գործառնություններն իրականացնելիս Քարտուղարությունը սերտորեն համագործակցում է ՀՀ-ում գործող կանխարգելիչ հակակոռուպցիոն մարմինների հետ՝ ապահովելով գործընթացում վերջիններիս լիարժեք մասնակցությունը:

VII. Ստացված րվյալների ամփոփման հիման վրա քարտուղարությունը պարրաստում և Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին է ներկայացնում ծրագրերի կատարման ընթացքի վերաբերյալ պարբերական զեկույցներ, որոնք քննարկվում են խորհրդի նիստերում և ստանում համապարասխան գնահատական:

VIII. Խորհուրդը համակողմանիորեն ղեկավարում է հակակոռուպցիոն բարեփոխումների ընթացքը, վերահսկում հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման և գնահատման գործընթացները:

4. Բարձրացնել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության, հետապնդման արդյունավետությունը: Այս առումով առաջարկվում է.

I. Վերանայել կոռուպցիոն հանցակազմերը, հստակեցնել կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը և ցանկը:

II. Վերանայել քննչական մարմինների ենթակայությունը՝ հաշվի առնելով ինչպես սուբյեկտային, այնպես էլ՝ առարկայական չափանիշը: ՀՀ հարուկ քննչական ծառայությանը կարելի է վերապահել առավել բարդ կոռուպցիոն հանցագործությունների քննությունը, ինչը կապահովի այդ գործերի քննության անկախությունը և որակը, իսկ պարզ գործերը կարող են քննվել մյուս քննչական մարմինների կողմից:

III. Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով էապես բարձրացնել նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության որակն ու արդյունավետությունը:

IV. Ապահովել կոռուպցիոն հանցագործությունների քննության գործում իրավապահ մարմինների գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

5. Իրականացնել համալիր և փոխկապակցված բնույթ ունեցող այլ միջոցառումներ: Մասնավորապես՝

I. Բարձրացնել գոյություն ունեցող կանխարգելիչ հակակոռուպցիոն մարմինների ինստիտուցիոնալ և այլ կարողությունները. մասնավորապես՝ բարձրացնել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի դերն ու նշանակությունը:

II. Ապահովել պետական մարմինների միջև հակակոռուպցիոն քաղաքականության վերաբերյալ պարզաճ հաղորդակցություն և արդյունավետ ֆորմալ համագործակցություն:

III. Ապահովել հակակոռուպցիոն մարմինների կայուն հաղորդակցությունը հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման գործընթացներում ներգրավված դոնոր կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության կառույցների հետ:

IV. Ապահովել իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների և դրանց արդյունքների առավել բարձր հրապարակայնություն, այդ թվում՝ ՋԼՄ-ներով և համացանցային ռեսուրսներով պարբերական տեղեկատվություն փարածելու միջոցով:

6. Օգտագործված աղբյուրների ցանկ

1. «Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիա», Եվրոպայի խորհուրդ, ՀՀ-ն կոնվենցիան վավերացրել է 2005թ.-ի հունվարի 7-ին, որն ուժի մեջ է մտել 2005թ.-ի մայիսի 1-ին:
2. «Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիա», Եվրոպայի խորհուրդ, ՀՀ-ը կոնվենցիան վավերացրել է 2006թ.-ի հունվարի 9-ին, որն ուժի մեջ է մտել 2006թ.-ի մայիսի 1-ին:
3. «Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն», Եվրոպայի խորհուրդ, ՀՀ-ն արձանագրությունը վավերացրել է 2006թ.-ի հունվարի 9-ին, որն ուժի մեջ է մտել 2006թ.-ի մայիսի 1-ին:
4. «Կոռուպցիայի դեմ կոնվենցիա», Միավորված ազգերի կազմակերպություն, ՀՀ-ը կոնվենցիան վավերացրել է 2007թ.-ի սարգի 8-ին, որն ուժի մեջ է մտել 2007թ.-ի ապրիլի 7-ին:
5. Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք, ընդունվել է 21.02.2007թ.-ին:
6. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք, ընդունվել է 26.05.2011թ.-ին:
7. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ընդունվել է 18.04.2003թ.-ին:
8. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ընդունվել է 26.05.2011թ.-ին:
9. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ընդունվել է 22.12.2010թ.-ին:
10. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ընդունվել է 26.05.2008թ.-ին:
11. «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ ստեղծելու մասին» ՀՀ Նախագահի թիվ ՆՀ-100-Ն հրամանագիր, ընդունվել է 01.06.2004թ.-ին:
12. «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1272-Ն որոշում, ընդունվել է 08.10.2009թ.-ին:
13. «Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների միջոցառումներ համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի թիվ 1806-Ա/Բ/ հրաման N ընդունվել է 30.12.2010թ.-ին:
14. «ՀՀ դատական համակարգի հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ Դատարանների նախագահների խորհրդի N-92 որոշում, ընդունվել է 21.02.2006թ.-ին:

15. «Կոռուպցիոն հանցագործությունների մասին» ՀՀ գլխավոր դատախազի թիվ 82 հրաման, ընդունվել է 19.11.2008թ-ին:
16. «Կոռուպցիայի վերաբերյալ տնային տնայնությունների հետազոտություն» Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան (Caucasus Research Resource Centers. Armenia Corruption Surveys 2008-2010), հասանելի է <http://old.crrc.am/index.php/en/159/> հասցեում:
17. ԳՐԵԿՈ-ի գնահատման 3-րդ փուլի համապարասխանության զեկույցների կարարողականների զեկույց (Group of States against Corruption. Evaluation Report on Armenia on Incriminations (ETS 173 and 191, GPC 2). Plenary Meeting Report, Strasbourg, 2010), հասանելի է [http://www.coe.int/t/dghl/monitoring/greco/evaluations/round3/GrecoEval3\(2010\)4_Armenia_Online_EN.pdf](http://www.coe.int/t/dghl/monitoring/greco/evaluations/round3/GrecoEval3(2010)4_Armenia_Online_EN.pdf) հասցեում:
18. ԳՐԵԿՈ-ի՝ առաջին և երկրորդ փուլերի համադրել գնահատման համապարասխանության զեկույցների կարարողականների զեկույց, հասանելի է [http://www.coe.int/t/dghl/monitoring/greco/evaluations/round2/reports\(round2\)_en.asp](http://www.coe.int/t/dghl/monitoring/greco/evaluations/round2/reports(round2)_en.asp) հասցեում:
19. Արևելյան գործընկերության շրջանակներում 2012-13 ճանապարհային քարտեզ (European Commission. Joint Communication to the European Parliament, the Council, the European Economic and Social Committee and the Committee of the Regions *Eastern Partnership: A Roadmap to the Autumn 2013 Summit*. Brussels, May, 2012), հասանելի է http://ec.europa.eu/world/enp/docs/2012_enp_pack/e_ship_roadmap_en.pdf հասցեում:
20. Համաշխարհային բանկի ինստիտուտի՝ համաշխարհային կառավարման ցուցանիշներ (Worldwide governance indicators) պաշտոնական կայքէջում <http://info.worldbank.org/governance/wgi/index.asp> հասցեում:
21. Համընդհանուր բարեխղճության զեկույց (Global Integrity. Global Integrity Report: 2011 Executive Summary. Washington, 2011), հասանելի է <http://www.globalintegrity.org/report> հասցեում:
22. Համընդհանուր բարեխղճության համաթիվ (Global Integrity. Global Integrity Index: 2009. Washington, 2009), հասանելի է <http://report.globalintegrity.org/globalIndex.cfm> հասցեում:
23. Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլան. Չեռքերումներ և մարտահրավերներ (The Istanbul Anti-Corruption Action Plan. Progress and Challenges. OECD, 20 October, 2008), հասանելի է <http://www.oecd.org/corruption/acn/42740427.pdf> հասցեում:
24. Կարեն Հուսման (Karen Hussmann), Հակակոռուպցիոն քաղաքականության մշակումը պրակտիկայում (Anti-corruption policy making in practice: Implications for implementing UNCAC), հասանելի է www.U4.no/themes/uncac հասցեում:

25. Կոռուպցիայի դեմ եվրոպական գործընկերներ, «Հակակոռուպցիոն մարմնին ներկայացվող չափանիշերը և ուղիկանության նկարմամբ վերահսկողության սկզբունքները» (EPAC/EACN Anti-Corruption Authority Standards and Police Oversight Principles):
26. Կոռուպցիայի ընկալման համաթիվ (Transparency International. Corruption Perceptions Index 2012), հասանելի է www.transparency.org հասցեում:
27. Վիճակագրական փվյալներ՝ 2012 թվականի ընթացքում արձանագրված կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ, հասանելի է <http://www.genproc.am/am/197/item/7681/> հասցեում:
28. Տնրեսական համակագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի համար հակակոռուպցիոն ցանցի Սփամբուլյան գործողությունների ծրագիր, Հայաստանի վերաբերյալ մոնիտորինգի երկրորդ զեկույց, (OECD Anti-Corruption Network for Eastern Europe and Central Asia, Istanbul Anti-Corruption Action Plan, Second Round of Monitoring, Armenia. *Istanbul Anti-Corruption Action Plan country reports*. Paris, 29 September, 2011), հասանելի է <http://www.oecd.org/corruption/acn/48964985.pdf> հասցեում:
29. Տնրեսական համակագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի համար հակակոռուպցիոն ցանց, Հայաստանի վերաբերյալ մոնիտորինգի առաջին զեկույց, հասանելի է <http://www.oecd.org/countries/armenia/37835966.pdf> հասցեում:
30. ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» իմպլեմենտացիայի վերաբերյալ օրենսդրական ձեռնարկ (United Nations, Office on drugs and crime. *Legislative guide for the implementation of the United Nations Conventions against Corruption*. Vienna, April, 2012).
31. Զարգացման և սոցիոլոգիական խորհրդարվության ինստիտուտ, Այ Փի Էս Սի, «ՀՀ իշխանությունների գործունեության գնահատականները. տեսանելիությունը, ձեռքբերումներն ու բացթողումները և զարգացման ռազմավարական առաջարկները», Սոցիոլոգիական հետազոտություն GS Index- 1/13, Երևան, 6 ապրիլ, 2013, հասանելի է <http://gov.am/am/announcements/> հասցեում:
32. Եվրոպական վերակառուցման ու զարգացման բանկի և Համաշխարհային բանկի «Բիզնես միջավայրի և ձեռնարկությունների կարարողականի մասին» համարել ուսումնասիրություն, հասանելի է http://siteresources.worldbank.org/INTECAREGTOPANTCOR/Resources/704589-1267561320871/Armenia_2010.pdf հասցեում:
33. Եվրոպական հարևանության քաղաքականության և գործընկերության գործիք, Հայաստան. Ռազմավարություն 2007-2013թթ.-ի համար (European Union. European Neighbourhood and Partnership Instrument, Armenia. *Country Strategy Paper 2007-2013*), հասանելի է http://ec.europa.eu/world/enp/pdf/country/enpi_csp_armenia_en.pdf հասցեում: